№ 34 ՈՒՐԲԱԹ, 17 ՓԵՏՐՎԱՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 17 ՓԵՏՐՎԱՐԻ № 34

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում կրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամենուրեքով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1912** Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը 85 կ. և 15 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դօլար. Եւրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն, և միւնոյն ժամանակ 40 կ. նամակագրոշմ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական ըլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՕՐՍԱՑԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
Այսօր, ուրբաթ, փետրվարի 17-ին
Հայ թատերասէրները
Բարեհաճ մասնակցութ. դրամատիկ դերասան
Մ. Թ. Ն Ճ Ե Ա Ն Ի
Կը ներկայացնեն
I
„ՎԱՐՁՈՒ ԿԻՆ"
4օմ. 1 գործ. Թարգմ. Ա. Վրայրի
Բեմադրութիւն՝ Մ. Թաղճեան
II
Պ Ա Ր Ե Ր
Եւրոպական և ասիական
Նուագելու են երաժշտական խումբը և սազանդարներ։
Սկիզբն է երեկոյեան ժամը 7-ին։
Տոմսակները ծախվում են Խրիմեանցի խանութում։
Պատասխանատու-կարգադրիչուհի՝
Սօֆիա Գրիգորեան
առ. 09. 1—1

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝
առանձնապէս կրծքի, ԹՈՔԱՈՏԻ և սրտի։
Որսկումներ նաև տուբերկուլինով։
Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւօտեան ժամը 9—11-ը և երեկոյեան ժամը 5—7-ը։
Католическая ул. д. № 10. Տէլէֆօն № 792.
(Չ.ու.) առ. 989. 100—89

ԿՐԹԱՐԱՆԸ ՀՐԴԵՀԻ ՃԱՐԱԿ

Դպրոցը այրված է։

Փամբակի Մեծ Ղարաքիլիսայի գեղրոցը մոխրակոյտ է դարձել։

Ինչպէս կը տեղեկանան մեր ընթերցողները «Մշակի» ներկայ համարում տպված դպրոցական հոգաբարձութեան նախագահի նամակից, դեղրոցը տալիս էր 600 մանուկների կանոնաւոր կրթութիւն։

Տարվայ էկսին, ձմեռվայ օրերում, ուսումնական պարապմունքների ամենաեռուն ժամանակ աղէտալի կերպով վերջ է տրվում կրթական գործին։

Ի՞նչ պէտք է լինի դպրոցական կրթութեան վիճակը, ի՞նչ պէտք է անեն աշակերտները, ուսուցիչները։

Ծանր և պատասխանատու հարցեր են դրված Մեծ Ղարաքիլիսայի հոգաբարձութեան և հասարակութեան առաջ։

Անշուշտ՝ տեղական մարդիկ կաշխատեն միջոցներ որոնել դպրոցական կրթութիւնը որևէ եղանակով շարունակելու, յարմարեցնելով այս կամ այն շինութիւնը։ Բայց հեշտ չէ 600 հոգու համար տեղ գտնել և դասաւանդութեան համար որոշ յարմարութիւններ ստեղծել։

Աւելի հիմնական հարց է հանդէս գալիս՝ դպրոցական նոր շինութիւն կառուցանելու հարցը։

Ղարաքիլիսայում մի քանի անգամ յարուցվել է դպրոցական հիմնաւոր շէնք ունենալու խնդիրը, բայց չէ կարողացել իրագործուիլ ստանալ նիւթական միջոցների պակասութեան պատճառով։

Այժմ, երբ ճակատագրական ձեւով ղարաքիլիսեցիների առաջ ասպարէզ է եկել դպրոցի շինութեան հարցը, ուրի լուծումը պէտք է կատարվի անմիջապէս, առանց տարիներով ձգձգելու, այժմ անհրաժեշտ է, որ Ղարաքիլիսայի դպրոցական շէնքի կառուցման հոգատարութիւնը ճանաչվի իբրև հերթական հարց և ամեն տեսակ միջոցներ ձեռնարկվեն կարելիին չափ շուտով սկսելու գործը։

Անշուշտ, առաջին ուժեղ արձագանքը պէտք է տան դարաքիլիսեցիները, որոնց մէջ կան թէ ունևոր և թէ միջակ կարողութեան տէր մարդիկ բաւական թւով։ Միևնոյն ժամանակ անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր մարդ՝ ով համակրում է գիւղական կրթական գործին՝ օժանդակէ իր կողմից հիմնարկելու մի լաւ ծրագրված խոշոր դպրոցական շէնք, որը կարողանար ապատորէն տեղաւորել բոլոր ուսանել ցանկացողներին։

Վեց հարիւր հոգի աշակերտ ունենալը կատակ չէ։ Եւ վեց հարիւր հոգու կրթութեան բաղդ [illegible] սի հանգամանք չէ, որ նրան հեշտութեամբ մոռանան և անտես առնեն մարդիկ։

Անյապաղ օգնութեան կարօտ է Ղարաքիլիսայի կրթական գործը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 փետրվարի

Պետերբուրգ.—Ներքին գործերի մինիստր Մակարովը բաղդաւորվեց ստանալու հետեւեալ հեռագիրը Կայսրից. «Ցանձնարարում եմ հաղորդել տեղական ինտենսիվութեան գործերի խորհրդի անդամներին Իմ շնորհակալութիւնը Ինձ արտայայտած ամենահաւատարիմ զգացմունքների համար։ Ցանկանում եմ նրանց աջողութիւն առաջիկայ աշխատանքում։ ՆԻԿՕԼԱՅ»։

Բարձրագոյն պալատում 14 օրով սուգ սահմանվեց Լիւկսէմբուրգի մեծ դուքս Վիլհելմի մահվան առիթով։

Պետական Նախկին տպարանի շինութեան մէջ մամուլի գործերի գլխաւոր վարչութեան պետը բացեց մամուլի 1911 թ. լոյս տեսած արտադրութիւնների չորրորդ հերթական ցուցահանդէսը։ Բացումից առաջ կատարվեց մաղթանք։ Հանդիսին ներկայ էին գլխաւոր վարչութեան պաշտօնեաները, էկսպօնատներ դրած հաստատութիւնների ներկայացուցիչները և հրաւիրված անձինք։

—

Բերլին.—Բայխստագ։ Քննվում է ներքին գործերի մինիստրութեան նախահաշիւը։ Պատգամաւորները խօսում են Գերմանիայի սոցիալական և ազատական քաղաքականութեան մասին։ Սոցիալ-դեմօկրատները մատնանշում են, որ կապիտալիզմը ժողովրդական մասսաները պրոլետարիզացիայի է ենթարկում։ Սոցիալիստներից մէկի այն յայտարարութիւնը՝ թէ միայն շնորհիւ սոցիալիստների գործադրվեց սոցիալական օրէնսդրութիւն Գերմանիայում, առաջ է բերում ընդհանուր ծիծաղ։ Պատգամաւոր կոմս Պոսադովսկին մատնանիշ է լինում, որ արտասահմանում նախանձով են նայում Գերմանիայի զարգացմանը տնտեսական ու սոցիալական տեսակէտներից, և բողոքում է մասսաների պրոլետարիզացիայի ենթարկվելու մասին արած յայտարարութեան դէմ. ընդհակառակն բանւորները ներկայումս շնորհիւ մեքենաների աւելի շատ ժամանակ ունեն ինքնազարգացման և հասարակական գործունէութեան։

Բայխստագի պրեզիդիումի նոր ընտրութիւնները տեղի են ունենալու փետրվարի 24-ին։

—

Վիէննա.—Զալցբուրգ—Վիէննա գծի վրա արագ գնացքի մէջ Պարիզի ակնագործ Լէվիից յափշտակել են 200 հազար ֆրանկի ակնեղէն։

ԹԻՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 փետրվարի

Կ. Պոլիս.—Բէյրութի վալին հեռագրում է, որ ռմբակոծութեան ժամանակ «Ամֆուլլա» նաւից սպանվեցին երկու օֆիցէր և 20 զինուոր, վիրաւորվեցին 10, անհետ կորել են 20 հոգի։ Քաղաքում սպանվեցին 58 քաղաքացի և 41 անյայտ մարդ, իսկ վիրաւորվեցին 15 անյայտ մարդ։

Լրագիրները հաղորդում են, որ կառավարութիւնը վճռել է արտաքսել մի քանի ժուռնալիստներ։ Թէ [illegible] յունական «Պրոօդոս» և «Կոսլոգոս» լրագիրների խմբագիրներին։

—

Հռոմ.—Պարիզեան լրագիրների այն տեղեկութիւնները, իբր թէ իտալական նաւատորմը ցոյց է արել Կարիրում, չէն հաստատվում։ Տեղեակ շրջանները այդ լուրի մէջ տեսնում են սխալ տեղեկութիւն, թխված Կ. Պոլսում, հաւանօրէն եւրօպական հասարակական միտքը զրգռելու նպատակով։

Ստեֆանիին հեռագրում են Հօլմսից, որ իտալացիները գրաւեցին Մերհէբ բարձրաւանդակը և յամառ կռուից յետոյ ջարդեցին թիւրքերին և առառ [illegible] ուներեցան։ Իտալացիք կորցրին 11 սպանված և 82 վիրաւոր։

Պաշտօնական շրջաններում և մամուլի մէջ մեծ համակրանքով ընդգծվում է, թէ Իտալիան պէտք է երախտապարտ լինի Ռուսաստանին պատերազմը դադարեցնել տալու կրկնակի քայլերի համար։ Լրագիրները չեն թագցնում իրանց յուսախաբութիւնը դաշնակից պետութիւններից, որոնք լոկ խոչընդոտ են հանդիսանում մինիստր Սալանդրայի հաշտարար գործունէութեան։

ՀԵՌԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 փետրվարի

Պէկին.—Նէնսիի նահանգապետ Նէնիւնը վճռականապէս չէ ընդունում նոր բէժիմը և հեռագրեց Իւանշիկայի, որ յաղթութիւն է տարել հանրապետականների վրա, խնդրելով զեկուցել կայսրին պարգևատրվելու համար։

—

Տոկիո.—Կօբէում ընակվող չինացիները դժգոհ են, որ ոստիկանութիւնը միջամտում է տօնական հանդէսներին և պահանջում է Չինաստանում բոյկոտի ենթարկել եապօնական ապրանքները։

«Կոկումինը» պնդում է, թէ անհրաժեշտ է զօրքեր ուղարկել Մանջուրիա եապօնահպատակների պաշտպանութեան համար, որոնք տուժում են տեղական անիշխանութիւնից։

Սինմինտատամիում հրդեհին զոհվել են 15 մարդ։

Ներքին գործերի մինիստրի նախաձեռնութեամբ և ղեկավարութեամբ հոգևորականութեան, սիկոիզմի և քրիստոնէութեան բարձր ներկայացուցիչները կազմակերպում են միութիւն կառավարութեան հետ՝ ներքին քաղաքականութեանը, ժողովրդի մէջ բարոյագիտական սկզբունքներին և գահի վեհութեանը օժանդակելու համար։

—

Չիֆու.—Փոթորիկը արգելք եղաւ այստեղից Դէնչժուֆու զօրքեր ուղարկելուն։ Լրագիրների տեղեկութիւնների համաձայն այնտեղ տեղի է ունեցել կատաղի կռիւ։

ԳՈՐԾԱԳՈՒԼՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
15 փետրվարի

Լօնդոն.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Ասկվիտը և մինիստրները խորհրդակցեցին հանքային բանւորների ներկայացուցիչների հետ։ Ասկվիտի առաջարկութեամբ կազմվեց խորհրդակցական մարմին բանւորներից կառավարութեան հետ բանակցելու համար։ Յետոյ մինիստրները խորհրդակցեցին այդ մարմնի հետ, իսկ երեկոյեան խորհրդակցեցին հանքատէրերի հետ։ Բանակցութիւնները դադարի են և կը տևեն մինչև փետրվարի 15-ը։

Հանքային բանւորների խորհրդակցութիւնը միաձայն որոշեց շարունակել բանակցութիւնները։ Մի բանաձև ընդունվեց, որով բանւորներին առաջարկվում է շարունակել աշխատանքները գործադուլի յայտարարման ժամանակը լրանալուց յետոյ, որչափով այդ պահանջվում է հանքերի ամբողջութիւնը պահելու համար։

Լրագիրների ասելով հանքերի մեքենա[illegible] ծադուլ անել անկախ նրանից, թէ գործադուլ կանեն հանքային բանւորները թէ ոչ։ Մեքենավարների պահանջները կապ չունեն հանքային բանւորների պահանջների հետ։ Հանքային բանւորները շարունակում են թողնել աշխատանքները։ Հաղորդում են, որ արդէն գործաթողների թիւը 100 հազարի է հասել։

Ասկվիտը ընդունվեց թագաւորից։ Մինիստրութիւն վերադառնալուց յետոյ նրա մօտ եկան տէրերի և բանւորների ներկայացուցիչները։

Թագուհի Ալէքսանդրան հիւանդացաւ ինֆլուէնցիայով։

Բուէնոս-Այրէս.—Երկաթուղային գործադուլը վերջացաւ։

—

Կինզատօն.— Էլեքտրաքարշի վճարի քանակից դժգոհ լինելու պատճառով տեղի ունեցան անկարգութիւններ։ Թեթև վիրաւորված են նահանգապետը և սրա ադիւտանտը։ Ոստիկանութեան վրա կրակ բացվեց։ Սպանվեց մինը, ծանր վիրաւորվեցին 1 և թեթև՝ 30 հոգի։ Հանգստութիւնը վերականգնվեց։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏ. ԵՒ ՏՆԱՑՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

II

Ընկերութիւնների միացեալ նիստը

Ա. Քալանթար զեկուցեց, որ նա փետրվարի 6-ին եղել է Գանձակում, այցելել է տեղական ջուլհականոցը և կազմել է նիստ տեղական ճիւղի վարչութեան անդամների հետ։

Զեկուցումից երևաց, որ Գանձակի ջուլհականոցը շարունակում է իր գործունէութիւնը։ Արհեստանոց յաճախում են 13 օրիորդ։ Նորեկները սովորում՝ են և վարձ չեն ստանում։ Հին աշակերտուհիները ստանում են շաբաթական 1 ր. 20 կ. մինչև 2 ռուբլի։ Նրանք պատրաստել էին տիկին Ֆրէյդերի պատուէրով մի գեղեցիկ սփռոց։

Գանձակի ճիւղի գործունէութիւնը մինչև այժմ գլխաւորապէս կենտրոնացած է եղել ջուլհականոցի շուրջը։ Որպէսզի գիւղատնտեսական մասն էլ զարգանայ, անդամները խնդրում էին, որ Թիֆլիսի կենտրոնական վարչութիւնը աջակցի նրանց նախնական շրջանում, մինչև որ սկսվի տեղական ինքնագործունէութիւնը։

Ընդհանուր ժողովը յանձնեց վարչութեանը հոգալու այդ մասին։

Ս. Աթանասեան կարդաց իր զեկուցումը գիւղատնտեսական ընկերութիւնների միացեալ նիստի մասին, որի բովանդակութիւնը համառօտ կերպով հետեւեալն է։

Թիֆլիսում գոյութիւն ունեցող գիւղատնտեսական ընկերութիւնները՝ Կովկասեան, Հայ, Վրաց, Թուշնաբուծութեան, Պղաբուծութեան, Մեղուաբուծութեան, այլ և Շերամապահական կայարանը և մասնագէտներ, ժողովված Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում, մի միացեալ նիստ կազմեցին երկրագործութեան դեպարտամենտի փոխ-դիրեկտոր Պ. Սկօվշենի մասնակցութեամբ։

Սկօվշենը դրեց ընդհանուր հարց տեղական գիւղատնտեսական ընկերութիւններին վերապահված արդիւնաւէտ գործունէութեան մասին և յոյս յայտնեց, որ նրան կարող կը լինեն նպաստել գիւղատնտեսական բաւականութիւնների գործին։

Սկզբում խնդիրը կենտրոնացած էր բամբակագործութեան շուրջը։ Նա քննութեան դրեց բամբակի լաւ սերմերի հարցը և ցանկութիւն յայտնեց, որ լաւագոյն տնտեսութիւնների ընտիր սերմերը չը խառնվեն բամբակ մաքրելու գործարաններում և առանձին պահվեն իբրև սերմացու ծախվելու համար։ Սերմի մեծ պահանջ կայ երկրում, մինչդեռ այնպիսի սերմացու չը կայ, որը գնեն գիւղատնտեսները ապահովաբար, և «կինգ» տեսակի փոխարէն վաճառ են հանվում անբաւարար սերմեր։

Թէ բամբակի և թէ ուրիշ բոյսերի լաւագոյն սերմեր ստանալու համար նպատակայարմար են գաւառական սերմահանդէսներ, որոնց կազմակերպութեանը կաջակցի դեպարտամենտը՝ յատկացնելով որոշ նպաստ, օրինակ՝ 500—600 և աւելի գումար, միայն թէ անհրաժեշտ է մշակել որոշ սիստեմով և ծրագրով գործունէութիւն և ներկայացնել դիմումները մինչև օգոստոս ամիսը։

Հարց յարուցվեց պտղաբուծական տնկարանների հիմնադրութիւնները պարզեցին, որ տնկարանների հիմնադրութիւնը թողվի մասնաւոր նախաձեռնութեան։

Մտքի փոխանակութեան առարկայ եղաւ այն, թէ արդեօք ազգայնական ընկերութիւնները—ինչպէս ռուս, հայ, վրաց ընկերութիւնները—չեն խանգարի միմեանց։ Պարզվեց, որ, ընդհակառակը, նրանք միմեանց օգնում են, միմեանց լրացնում և ժողովրդական զանազան խաւերին մօտենում։ Եւ ցանկալի է, որ նրանք բանակցելով միմեանց հետ՝ խնդրամասոյց լինեն ստանալու նպաստներ բոլորի մէջ բաժանելու համար ըստ գործի յարմարութեան։

Այդ նիստի առաջիկայ արդիւնքներից [illegible] սեղանի վրա դրված հարցերը։

Ընդհանուր ժողովը լիազօրեց վարչութեանը՝ մասնակցելու միացեալ խորհրդակցութեանը ընկերութեան անդամների միջոցով։

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

IV

Թիֆլիսի համալսարանի հարցը.—Կաթողիկոսական ենդիրը.—Դաստակերպութեան գործը։

Պետերբուրգ, 10 փետրվարի

Երէկ, փետրվարի 9-ին, երեկոյեան ժամը 8—11 կայացած մինիստրների խորհրդի նիստում, ի թիւս այլ հարցերի, քննվել է և Թիֆլիսում համալսարան հիմնելու հարցը։ Դժբաղդաբար, նա չէ գտել մեզ համար նպատակաւոր լուծումն։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստր կասսոն ներկայացրել է մի քանի նոր բարձր կրթական հաստատութիւններ բանալու ծրագիրը։ Այդ ներկայացրած ծրագրով որոշվել է առաջին հերթով բանալ գիւղատնտեսական ինստիտուտ Վօրոնէժում, հանքային ինստիտուտ Եկատերինբուրգում և համալսարանի բժշկական ֆակուլտէտ Բաստովում։ Իսկ Թիֆլիսում, ֆիզիք-մատեմատիքական ֆակուլտէտ բանալու ծրագիրը հավանութիւն չէ գտել խորհրդի անդամների մեծամասնութեան կողմից, որոնք, ինչպէս այսօր հաղորդում է «Н. В.» թերթը, այն կարծիքն են արտայայտել, թէ հանրակրթական մի հաստատութեան հիմնումը Կովկասում կարող է առաջ բերել քաղաքական ագիտացիայի սրումն, իսկ գլխաւորապէս՝ որ Կովկասը ներկայումս աւելի շատ պէտք ունի մասնագիտական տեխնիքական կրթական հաստատութիւնների, քան համալսարանի։ Սակայն հարցը վերջնականապէս չէ որոշվել և չէ մերժվել, այլ յետաձգվել է գարնան՝ մինչև Կովկասի Փոխարքայի գալուստը Պետերբուրգ։ Իմ ստացած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ գարնանն ևս հարցը չէ լուծվի մեզ համար նպատակաւոր կերպով, այնպէս որ Թիֆլիսում համալսարան տեսնելու յոյսը, գոնէ մօտաւոր տասնեակ տարիների ընթացքում, չէ իրականանայ, և աւելի լաւ է, որ մենք մտածենք այժմ հիմնել տալ պոլիտեխնիկում, որի գաղափարը համակրութիւն է գտնում բարձր շրջաններում։

* * *

Կաթողիկոսական հարցի մասին նորութիւն այս է. ներքին գործերի մինիստրութիւնը դեռ չէ յանգել որոշ եզրակացութեան՝ ընտրութեան ժամանակ կատարված զեղծումների և անկանոնութիւնների մասին։ Ինչպէս լսվում է, մինիստրութեան համար հոգսերի առարկայ է այն հարցը,

թէ որքան հեղինակութիւն կարող է ունենալ Սուրէնեանը իրրև ամենայն հայոց կաթողիկոս ռուսահայերի մէջ, քանի որ Ռուսաստանի հայութիւնը կազմող 6 թեմերից 5-ը չէ մասնակցել նրա ընտրութեան և ընդդէմ է եղել նրա կաթողիկոսացման։ Հաւանական է, սակայն, որ քաղաքական նկատումները աւելի գերակշիռ հանդիսանան, քան բարոյական նկատումները, և Սուրէնեանը հաստատվի։

* * *

«Դաշնակցութեան» պրօցէսը մի նոր անակնկալ փաստի մէջ մտաւ Այսօրվայ լրագիրները հաղորդեցին մի կարևոր լուր, թէ արդարադատութեան մինիստր Շչեգլովիտովը կարգադրութիւն է արել, որ «Դաշնակցութեան» գործին վերաբերեալ բոլոր քննական նիւթերը և փաստաթղթերը յանձնվեն Պետերբուրգի նահանգական դատարանի կարևորագոյն գործերի քննիչ Ալէքսանդրովին, մի նոր նախնական քննութիւն կատարելու՝ բացատրելու համար մի քանի կարևոր դոկումենտների անհետացման խնդիրը։

Ահա ինչ է հաղորդում այդ մասին «Բեպե» լրագիրը (10 փետր. № 39)։

Գործը քննող սենատ առանձին ատեանի կարգադրութեամբ մի քանի կարևոր դոկումենտներ յանձնվում են էքսպերտներին՝ քննելու։ Ահա այդ էքսպերտիզ-մի ժամանակ մի կարևոր դոկումենտ, որ պէտք է ծառայէր յօգուտ մեղադրեալների, անհետանում է գործից։ Պէտք է ասել, որ այդ դոկումենտի մէջ «Ամասիա» բառը քերված և տեղը գրված է «Հեմիլիա»։ փաստաբանները խնդրել էին սենատից ենթարկել նրան էքսպերտիզի, ապացուցանելու համար որ այդ կեղծիքը կատարվել է գործը Լէժին քննիչի մօտ եղած ժամանակ։ Մի ուրիշ դոկումենտի մէջ «Դոլգորի» խօսքը քերված և [illegible] (հաստատեալներից մէկի ազգանունը)։ փաստաբանները նոյնպէս խնդրել էին ենթարկել այդ թուղթը ֆոտոգրաֆիական, միկրոսկոպական և քիմական էքսպերտիզի՝ երևան հանելու համար կեղծիքը։ Եւ ահա երբ թղթերը յանձնվում են էքսպերտներին, վերոյիշեալ դոկումենտը անհետանում է անհասկանալի կերպով։

Արդեօք մինիստրի այդ կարգադրութիւնը՝ նոր քննութիւն կատարելու՝ առաջ կը բերէ պրօցէսի քննութեան յետաձգումը թէ ոչ, յայտնի չէ։ Հ. Առաքելեան

ՀԱՅԵՐԷՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ 1512 ԹՈՒԱԿԱՆՆ Է

Նորութիւն հաղորդել չեմ ուզեր յօդուածով, այլ միայն փաստել այն տարակոյսը, զոր վերջերս հանեց պ. Սա. Մալխասեան հայ տպագրութեան սկզբնաւորութեան մասին («Մշակ», № № 18—19)։

Դեր. Գրիգոր Գովրիկեանի կատարած յայտնութիւնը 1889 թուին «Հանդէս Ամսօրեայի» մէջ՝ տուած էր հայ տպագրութեան սկզբնաւորութեան թուական 1512 տարին, երբ տպագրուած էր Վենետիկ D. I. Z. A. տպարանի մէջ Պարզատոմար մը։ Հ. Գովրիկեանի գիւտը ուշադրութիւն գրաւեց, և ահա յընթացս կարճ ժամանակի բանասէրներն յերևան հանեցին ուրիշ հատորներ ալ նոյն և յաջորդ տարիներէն, որոնց թիւն 1894-ին հ. Գր. Գալէմքեարեան կը հաշուէր արդէն հինգ՝ 1) Պարզատոմար, 2) Պատարագատետր, 3) Ուրբաթագիրք, 4) Ծաղարան և 5) Աղթարք։ Գրքեր, որոնք ԺԵ—ԺԶ դարերուն ամենէն գործածական մատեաններն էին հայ ժողովրդեան և հայ եկեղեցականութեան ձեռքը, Աւետարանէն և ժամագրքէն ետքը։ Ցակոբ էր առաջին հայ Գուտեմբերգին անունը։

Այս էր հասարակութեան համոզումը 1889-էն ի վեր, և նոյնը կրկնուած է այնուհետև ամէն հրատարակութեան մէջ։

Բնականաբար այս խոր համոզման վրայ շատ տարօրինակ հրեցաւ մեզի, և մեզի հետ անշուշտ շատերուն, պր. Մալխասեանի երկբայութիւնը թէ այդ հինգ հրատարակութիւնք իրօք տպագրութիւն են, թէ փայտագրութիւն։ Պր. Մալխասեան այս մտքի եկած է զննելով այն երկուերիք էջերը, որոնք մատչելի էին իրեն նմանահանութեամբ։

Բայց բաղձալի էր, որ նորանշան տարակոյս հրապարակի վրայ յայտնելէ յառաջ՝ ստուգէր խնդիրն աւելի մանրամասնութեամբ, հարցնէր տեղեկութիւններ ամբողջական հատոր մը ունեցողներէն։ Իր յօդուածին վերջը խնդրոյն վերջնական լուծումը կը ձգէ պ. Մալխասեան Վենետիկի կամ Վիէննայի Մխիթարեան հայրերուն։

Ես, իբրև մին վերջիններէն, կը փութամ փարատել յարուցուած տարապարտ կասկածը ժամանակ մը, երբ համայն հայութիւնը կը խորհի փառաւորութեամբ տօնել հայ տպագրութեան 400-ամեակը։

Աչքի առջև ունիմ հայերէն հնագոյն հրատարակութիւններէն երկու հատոր, Ուրբաթագիրքը և Պարզատոմարը։ Առաջին հայեցուածքով այնպէս կը կարծուի, թէ ասոնք ձեռագիր կամ պ. Մալխասեանի հետ՝ «փայտագրութիւն» ըլլան և ոչ տպագրութիւն։ Բայց անդրադառնալ զննութիւնը իսկոյն կը պարզէ, թէ աչաց առջև ունինք տպագրութիւն, եւ այն՝ տպագրութիւն բառին բովանդակ նշանակութեամբ։ տպագրուած է՝ նախապէս առանձին-առանձին տառերով շարուելէ ետքը։ Իրրև առանձին փորձ, բնականաբար, հայ տպագրէն չէր կրնար պահանջուիլ կատարելութիւն ակնկալուիլ, մանաւանդ որ, ինչպէս կը տեսնուի, ձեռնարկուն քաջ դրագէտ մըն ալ [illegible] տառերը և համեմատութեամբ նաև տպագրութիւնը բաւական գեղարուեստական են, աւելի ճաշակաւոր, քան Աբգար դպրի տպագրութիւնը։ Կան հոն զուգադրեր, տպագրութիւնը երկգոյն է։

Պր. Մալխասեան տպագիր ըլլալու վրայ երկբայած է գլխաւորաբար գրերու աննմանութեան պատճառաւ։

Ստուգիւ իրարու նման չեն տառերը։ բայց աննման են միայն բառի մը կամ տողի մը մէջ, և ոչ ամբողջ էջի մը վրայ և կամ գործոյն ընթացքին մէջ։ Եւ եթէ պ. Մալխասեան լաւ ուշ դնէ նոյն իսկ իր առջև եղած նմանահանութեանց, պիտի նշմարէ հոն գրերու մեծ նոյնութիւն, և այն ոչ թէ պատահական սէջ դեռ սրբդ. տեղ, այլ կանոնաւոր՝ ամէն բառի և ամէն տողի մէջ։

Իմ զննութիւնս ցոյց տուաւ, որ կան հոն 3 և երբեմն 4 ձևով նշանագիրներ, որոնք մէկ մայրէ թափուած չեն կրնար ըլլալ, այլ կենթադրեն նոյնքան մայրեր։ այսպէս կան այլևայլ ձևերով Ա, Ց, Թ, Ի, Շ, Ւ և այլն։ Ոմանց աննմանութիւնը ծագած է երբեմն անյաջող կտրուածքէն, երբ տառերու ինչ ինչ մասեր վնասուած են՝ ծռած կամ կոտրած։ Այսպէս թէ այնպէս, մի անգամ թափուելէն ետքը պահպանած են իրենց ձևերը բոլոր հրատարակութեանց մէջ միօրինակութեամբ. իրողութիւն մը, որ չէ կրնար փայտագրութեամբ մեկնուիլ։ Մանաւորապէս ուշադրութեան արժանի է հետևեալ պարագան. Թ գրէն երկու ձև կայ, Թ կարճասրուն՝ սովորական գործածութեան համար, և Թ երկայնասրուն և պատուով, որոնք յայտնի կը տեսնուին թէ առանձին-առանձին թափուած են՝ տարբեր մայրերէ։ Անհնարին է ընդունիլ, թէ ընդօրինակողը մասնաւոր նկատումով պատուով Թ-երն երկայնասրուն բռնած է և սովորականները՝ կարճասրուն։

Բաց ասկից, տպագրութեան արուեստին քիչ շատ ծանօթ մը դիւրաւ կը զգայ հոն տպագրութեան հետքերը՝ տողերու ծռութեան, գրերու շրջուածքի (գլխիվայր), տեղափոխութեան (հետ առաջութեան) և վերջապէս վրիպակներու մէջ։ Հայ տպագրիչը ոչ քաջ գրագէտ և ոչ քաջ արուեստագէտ մը ըլլալով՝ չէ կրցած լաւ ամրապնդել շարուածքը, որուն հետևութեամբ շատ յաճախ կոճտին տողերն ոչիղ գծէն եւ կը ստանան օձապտոյտ ընթացք մը, բան մը, որ այսօր ալ տեղի կունենայ տպագրութեան ժամանակ, երբ լաւ ամրապնդուած չըլլար շարուածքը, մինչ փայտագրութեան մէջ այնպիսի աղամղեալ շրջան չի կրնար մտածուիլ։ Նկատելի է և այն, որ ուր լաւ ամրացուած է շարուածքը, լաւ են նաև տողերը՝ իրարմէ որոշ հեռաւորութեան մէջ՝ ուղիղ գծի վրայ։

Ինչպէս ըսինք, պակաս չեն հոն նախադեռ այսօր տպագրութեան մէջ շատ սովորական 1) շրջուած գրերը, այսպէս յանուանէ ք, հ գրերը հետևեալ բառերու մէջ. շրթայտ, հզօր և այլն. 2) տեղափոխուած գրեր. օր. ի վ—ջերայ երման=ի վերայ ջերման, ոգրոյ=որոյ, Մաթէոս=Մաթէոս, սէորբէւքն=սերովբէքն, անուամբն=անուամբն (նախ օ առնուած, և սրբագրութեան ժամանակ ո զետեղուած՝ առանց օ-ն ի բաց առնելու) և այլն. 3) վրիպակաւ առնուած գրեր. օրինակ՝ բնութիւն=ընութիւն, ջրայն=ջրոյն, սը=որ, քեզ=ձեզ, Սուրբաթ, նախ՝ Սուրբաթ=Ուրբաթ, սուրբոն, սուրբսն=սուրբն, ըզկալ=ընկալ, բծշկել=բժշկել, Սեստիանէ=Ուստիանէ և այլն։ վրիպակներ, որոնք յախուռն քաղուած են քանի մը էջերէն և որոնք բարձրագոյ կը բողոքեն տգէտ գրաշարին դէմ։

Եթէ ծանօթ ըլլային այս կէտերը պր. Մալխասեանի, վստահ ենք թէ չէր վստահանար հանել այն եզրակացութիւնը, որուն յանգած է դժբաղդաբար։

Այսպէս հաստատուն բռնելով հայ տպագրութեան առաջին տարին 1512 թուականը, ուրախութեամբ կողջունենք այսօր հայ մամուլի 400-ամեակը։ կողջունենք զայն ի սրտէ, որչափ ուրախարար են 400-ամեայ արդիւնքը հայ մամուլին։ Պատիւ սկիզբ դնողին, փառք զայն պայծառացնողին և պարծանք անոր արդիւնքը վայելողին։

Հ. Ն. Ակինեան

Վիէննա, 22 փետր. (Ն. տ.)

ԴՕԿՈՒՄԵՆՏՆԵՐԻ ԱՆՀԵՏԱՆԱԼԸ «ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ԴԱՏԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Դաշնակցութեան դատին վերաբերեալ դոկումէնտների կորուստի և կեղծելու առիթով «Вечъ. Вр.» լրագիրը հաղորդում է հետևեալ մանրամասնութիւնները։ Մեղադրվող Մելեանի, Դոլգոչիովի և Արաւելեանի պաշտպանները, քննելով այն արձանագրութիւնները, որոնք գտնվեցին դոկումէնտները խուզարկելու ժամանակ, դատաուղղումներ և քերուածներ այն տեղերում, ուր գրված էին իրանց կլիէնտների ազգանունները։ Դիմելով ժանդարմների տրված տեղեկութեանը, պաշտպանները հաստատեցին, որ ժանդարմային արձանագրութեան համապատասխան տեղերում գրված են բոլորովին այլ անուններ. փոխանակ Մելեանի՝ գրված է Ամասիա, և փոխանակ Դոլգոչիովի և Արաթելեանի՝ Դոլգորի և Արաւելեան։ Հէնց այդ Ամասիա, Դոլգորի և Առաւելեան ազգանունները առանց որևէ ուղղումների գտնվում են և դատաստական քննիչ Լրժինի թղթի մէջ՝ այդ գործի մէջ բոլոր կասկածված անձերին պատասխանատուութեան ենթարկելու համար։ Մինչդեռ մեղադրական ակտով դատի կանչվեցին Մելեան, Դոլգոչիով և Արաթելեան։ Պաշտպանների խնդիրքով սենատը կարգադրեց արձանագրութեան քերված և ուղղված տեղերի լուսանկարչական էկսպէրտիզա կատարել։ Մեծացրած լուսանկարների քննութիւնից պարզ կերպով երևաց, որ բնագրի համապատասխան տեղերում սկզբում նշանակված էին կասկածվողների նոյն ազգանունները, որոնք գտնվում էին քննութեան ակտերում։ Այն ժամանակ պաշտպանները միջնորդեցին ցոյց տալ իրանց բուն դոկումէնտները, որոնց թւում և Եալիսեան ազգանուն կրող մէկի յուշատետրը Դաշնակցութիւն կոչվող կազմակերպութեան մասնակիցների ազգանունների ցանկով, որոնց քննութեան արձանագրութիւնները՝ ժանդարմների և քննիչի մօտ՝ միմեանց չեն բռնում։ Յուշատետրի քննութիւնից երևաց, որ նրանից դուրս է կորված 4-րդ երեսը, հէնց այն, ուր յիշված են Ամասիա, Դոլգորի և Արաւելեան։ Դրանից յետոյ բացվեցին էլի հետևեալ ուղղումները, որ ստուգվեցին լուսանկարչական էկսպէրտիզայով։ Մի վկայի ցուցմունքի մէջ յուշատետրում գտնված է. «Վերոյիշեալ անձանց ես չը տեսայ»։ Ուղղված է. «...ես ինքս տեսայ»։ Հետագրի մէջ Արաւելեան ստորագրութիւնը փոխված է Արաթելեանի, և այլն։ Ամենահետաքրքիրը ներկայանում է Դաւթեանց անունով մէկի նամակի ուղղված թւականը, որ շատ էական է մի քանի մեղադրվողների alibi-ն հաստատելու համար։ Թւականի տեղի վրա կարդես թէ թանաքի բիծ է երևում, իսկ բծի վրա դուրս է բերված 7 թւանշանը։ Լուսանկարչական էկսպէրտիզան ցոյց տուեց, որ բիծը ստացվել է ոչ թէ թանաքի կաթիլներից, այլ առաջ եղած 14 թւանշանը ձևակերպելուց։ Քննութեան արձանագրութեան մէջ այդ տեղում քերուածք կայ և նրա վրա 7 թւանշանը։ Որպէս ասում են, էկսպէրտիզայի հետևանքները ճնշող տպաւորութիւն գործեցին սենատորների վրա։ Նախագահող սենատոր Կրիվցով ծանուցեց այդ բոլորի մասին արդարադատութեան մինիստրին, և նոյն օրն և եթ կարևորագոյն գործերի դատաստանական քննիչ Ալէքսանդրովին առաջարկված է սկզբնական քննութիւն սկսել քրէական պատիժների օրէնսգրքի 303-րդ յօդուածի հիման վրա։ Քննութիւնը շատով առաջ է տարվում դատաստանական պալատի պրոկուրոր Կօրսակի անձնական հսկողութեան տակ։ («Р. В.»)

ՕՏԱՐԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Ուսացած ձիւն

Սօչի, 10 փետրվարի

Այս տարի մեզ մօտ չը տեսնված և զարմանալի լաւ եղանակներ էին անում. ծերերն անգամ նմանօրինակ եղանակներ չեն յիշում։

Զմեռը կատարեալ գարնան էր նման։

Արդէն տեղ տեղ բուսել էր կանաչ խոտը, ծառերը բողբոջներ էին արձակել, երբ ամսոյ 6-ին վրայ հասաւ ձիւնը։ Մինչև կէսօր սոսկալի ցուրտ անելուց յետոյ, խոշոր փաթիլներով սկսեց թափվել ձիւն, որի հետ միասին փչում էր ուժեղ քամի, քանդելով ինչ որ կարող էր։ Միւս առաւօտ կէս արշին խորութեամբ ապխտակ սաւանով ձիւնը ծածկել էր ամէն ինչ։ Այս անսպասելի ձիւնը էժան չի նստի շրջանիս գիւղացիների վրա, որովհետև, ոչ մէկի մտքովն անգամ չանցնելով, թէ այդպիսի գարնանային օրերին կը յաջորդէ ձիւն, նրանք իրանց անասուններին առատօրէն կերակրել են, իսկ այժմս, երբ ձիւնը դիզված է դռանը, պաշարը վերջանալու վրա է։ Ի՞նչ անի խեղճ գիւղացին կամ ուր դիմի...

Ծովը ալեկոծված է։ Սօչին ծովածոց չուենենալու պատճառով, շոգենաւերը այստեղ կանգ չեն առնում։

Սօչիի շրջանի ուսուցիչների մէջ միտք է յղացել կազմակերպելու քաղաքում Ուսուցչական Միութեան ճիւղ։ Այդ մասին Բարեկենդանի տօներին, երբ գիւղերից քաղաքն էին հաւաքվել ուսուցիչները, եղան խօսակցութիւններ։ Թէ ինչպէս կը վերջանայ, այդ ցոյց կը տայ մերձաւոր ապագան։ Կ. Վարդանեան

Երեկոյթ ի նպաստս Կ. Հ. Բ. Ը. իգդիրի ճիւղի

Իգդիր, 7 փետրվարի

Բարեկենդանի վերջին կիրակի երեկոյեան տեղիս պետական դպրոցում կայացաւ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի օգտին տրված երեկոյթը։ Թէպէտ երեկոյթի կարգադրիչները հրաւիրեալների սահմանափակութիւն են նշանակել, սակայն ցանկացողներին ոչ մի կերպ չը կարողացան մերժել, որով և առաջացաւ փոքրիկ անյարմարութիւն ընթրելու ժամանակ։

Պարերն աւելի աշխոյժ կանցնէին, եթէ նախօրօք այդ մասին հոգային և պարերն օրինաւոր կառավարող լինէր։ Երեկոյթին ներկայ էին գաւառապետը, հաշտարար դատաւորը, հաշտ. միջնորդները, բժիշկները, տեղիս պօստ-հեռագրատան պաշտօնեաները, ինչպէս և ռուսաց քահանան, իրանց ամուսիններով։

Առանձին շնորհակալութեան արժանի են քննիչ Զալիլով, պօստ-հեռ. կառավարիչ Ցիխատով և դպրոցի տեսուչ Ս. Ակիաձէ, որոնցից առաջինը իր տանը կայանալիք հրաւէրը յետաձգել էր ի պատիւ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի և իր ամուսնու հետ ներկայ եղել երեկոյթին, երկրորդը կառավարից լոսօն, երրորդը չը մերժեց ամբողջ դպրոցը դնել տեղիս ճիւղի վարչութեան տրամադրութեան տակ։

Սա առաջինը չէ, որ ռուս և վրացի հասարակութիւնը իրանց սիրալիր աջակցութիւնը ցոյց են տալիս թէ Բարեգ. Ընկերութեան տեղիս ճիւղին և թէ ծխ. դպրոցին, մասնակցելով ներկայացումներին և երեկոյթներին, զանազան պարտականութիւններ յանձն առնելով։

Շատ զոհ հեռացաւ մեծամասնութիւնը։ Դժգոհ էին միայն նրանք, որոնց կարծիքով՝ 75 կ.—1 ր. մուտքի վճար տալով իրաւունք ունէին ճոխ ընթրիք վայելել։

Մինչդեռ հաշ. միջնորդի ամուսինը շռայլութիւն էր համարում տրված համեստ ընթրիքն անգամ, աւելացնելով թէ օգուտ չի մնայ։

Հանդէսը մուտք ստացվեց 344 ր. 75 կ., ծախք՝ 129 ր. 7 կ., զուտ արդիւնք 215 ր. 68 կ։ Սաթ. Զաքարեան

ՄԵՐ ԳԻՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ

II

Շամախի-Սղնախ երկաթուղին, բաւական նաչափ բարձրացրել է մեր գիւղացիների տրամադրութիւնը։ Ինչպէս յայտնի է, այդ երկաթուղին պէտք է անցնի մեր գիւղի մօտով, համարեա թէ քերելով մեր հողերը։ Այդ պատճառով արդէն մի երկու ամիս առաջ մենք ուսեցել ենք մեր գիւղական ժողովը և միաձայն տուել ենք մեր համաձայնութիւնը երկաթուղու գծին տրամադրելի անելու ժողովրդական հողերից որ մէկ հողաբաժինն որ հարկաւոր լինի։ Ցիշեալ ժողովից մօտ մէկ ամիս յետոյ մեր գիւղի ներկայացուցիչները, գաւառապետի հրաւէրով, ներկայացել ես վերջինիս և իրանց ստորագրութիւններով տուել են նախնական քննիչ Լրժինի թղթի մէջ՝ այդ գործի մէջ բոլոր կասկածված անձերին պատասխանատուութեան ենթարկելու համար։ Մինչդեռ մեղադրական ակտով դատի կանչվեցին Մելեան, Դոլգոչիով և Արաթելեան։ Պաշտպանների խնդիրքով սենատը կարգադրեց արձանագրութեան քերված և ուղղված տեղերի լուսանկարչական էկսպէրտիզա կատարել։ Մեծացրած լուսանկարների քննութիւնից պարզ կերպով երևաց, որ բնագրի համապատասխան տեղերում սկզբում նշանակված էին կասկածվողների նոյն ազգանունները, որոնք գտնվում էին քննութեան ակտերում։ Այն ժամանակ պաշտպանները միջնորդեցին ցոյց տալ իրանց բուն դոկումէնտները, որոնց թւում և Եալիսեան ազգանուն կրող մէկի յուշատետրը Դաշնակցութիւն կոչվող մէկի յուշատետրը Դաշնակցութիւն կոչվող կազմակերպութեան մասնակիցների ազգանունների ցանկով, որոնց քննութեան արձանագրութիւնները՝ ժանդարմների և քննիչի մօտ՝ միմեանց չեն բռնում։ Յուշատետրի քննութիւնից երևաց, որ նրանից դուրս է կորված 4-րդ երեսը, հէնց այն, ուր յիշված են Ամասիա, Դոլգորի և Արաւելեան։ Դրանից յետոյ բացվեցին էլի հետևեալ ուղղումները, որ ստուգվեցին լուսանկարչական էկսպէրտիզայով։ Մի վկայի ցուցմունքի մէջ յուշատետրում գտնված է. «Վերոյիշեալ անձանց ես չը տեսայ»։ Ուղղված է. «...ես ինքս տեսայ»։ Հետագրի մէջ Արաւելեան ստորագրութիւնը փոխված է Արաթելեանի, և այլն։ Ամենահետաքրքիրը ներկայանում է Դաւթեանց անունով մէկի նամակի ուղղված թւականը, որ շատ էական է մի քանի մեղադրվողների alibi-ն հաստատելու համար։ Թւականի տեղի վրա կարդես թէ թանաքի բիծ է երևում, իսկ բծի վրա դուրս է բերված 7 թւանշանը։ Լուսանկարչական էկսպէրտիզան ցոյց տուեց, որ բիծը ստացվել է ոչ թէ թանաքի կաթիլներից, այլ առաջ եղած 14 թւանշանը ձևակերպելուց։ Քննութեան արձանագրութեան մէջ այդ տեղում քերուածք կայ և նրա վրա 7 թւանշանը։ Որպէս ասում են, էկսպէրտիզայի հետևանքները ճնշող տպաւորութիւն գործեցին սենատորների վրա։ Նախագահող սենատոր Կրիվցով ծանուցեց այդ բոլորի մասին արդարադատութեան մինիստրին, և նոյն օրն և եթ կարևորագոյն գործերի դատաստանական քննիչ Ալէքսանդրովին առաջարկված է սկզբնական քննութիւն սկսել քրէական պատիժների օրէնսգրքի 303-րդ յօդուածի հիման վրա։ Քննութիւնը շատով առաջ է տարվում դատաստանական պալատի պրոկուրոր Կօրսակի անձնական հսկողութեան տակ։ («Р. В.»)

ՕՏԱՐԵԿՈՒԹԻՒՆԵՐ ԴԱՒԱՌԻՑ

Ուսացած ձիւն

Սօչի, 10 փետրվարի

Այս տարի մեզ մօտ չը տեսնված և զարմանալի լաւ եղանակներ էին անում. ծերերն անգամ նմանօրինակ եղանակներ չեն յիշում։

Զմեռը կատարեալ գարնան էր նման։

Արդէն տեղ տեղ բուսել էր կանաչ խոտը, ծառերը բողբոջներ էին արձակել, երբ ամսոյ 6-ին վրայ հասաւ ձիւնը։ Մինչև կէսօր սոսկալի ցուրտ անելուց յետոյ, խոշոր փաթիլներով սկսեց թափվել ձիւն, որի հետ միասին փչում էր ուժեղ քամի, քանդելով ինչ որ կարող էր։ Միւս առաւօտ կէս արշին խորութեամբ ապխտակ սաւանով ձիւնը ծածկել էր ամէն ինչ։ Այս անսպասելի ձիւնը էժան չի նստի շրջանիս գիւղացիների վրա, որովհետև, ոչ մէկի մտքովն անգամ չանցնելով, թէ այդպիսի գարնանային օրերին կը յաջորդէ ձիւն, նրանք իրանց անասուններին առատօրէն կերակրել են, իսկ այժմս, երբ ձիւնը դիզված է դռանը, պաշարը վերջանալու վրա է։ Ի՞նչ անի խեղճ գիւղացին կամ ուր դիմի...

Ծովը ալեկոծված է։ Սօչին ծովածոց չուենենալու պատճառով, շոգենաւերը այստեղ կանգ չեն առնում։

Սօչիի շրջանի ուսուցիչների մէջ միտք է յղացել կազմակերպելու քաղաքում Ուսուցչական Միութեան ճիւղ։ Այդ մասին Բարեկենդանի տօներին, երբ գիւղերից քաղաքն էին հաւաքվել ուսուցիչները, եղան խօսակցութիւններ։ Թէ ինչպէս կը վերջանայ, այդ ցոյց կը տայ մերձաւոր ապագան։ Կ. Վարդանեան

Երեկոյթ ի նպաստս Կ. Հ. Բ. Ը. իգդիրի ճիւղի

Իգդիր, 7 փետրվարի

Բարեկենդանի վերջին կիրակի երեկոյեան տեղիս պետական դպրոցում կայացաւ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի օգտին տրված երեկոյթը։ Թէպէտ երեկոյթի կարգադրիչները հրաւիրեալների սահմանափակութիւն են նշանակել, սակայն ցանկացողներին ոչ մի կերպ չը կարողացան մերժել, որով և առաջացաւ փոքրիկ անյարմարութիւն ընթրելու ժամանակ։

Պարերն աւելի աշխոյժ կանցնէին, եթէ նախօրօք այդ մասին հոգային և պարերն օրինաւոր կառավարող լինէր։ Երեկոյթին ներկայ էին գաւառապետը, հաշտարար դատաւորը, հաշտ. միջնորդները, բժիշկները, տեղիս պօստ-հեռագրատան պաշտօնեաները, ինչպէս և ռուսաց քահանան, իրանց ամուսիններով։

Առանձին շնորհակալութեան արժանի են քննիչ Զալիլով, պօստ-հեռ. կառավարիչ Ցիխատով և դպրոցի տեսուչ Ս. Ակիաձէ, որոնցից առաջինը իր տանը կայանալիք հրաւէրը յետաձգել էր ի պատիւ Կ. Հ. Բ. Ընկ. տեղիս ճիւղի և իր ամուսնու հետ ներկայ եղել երեկոյթին, երկրորդը կառավարից լոսօն, երրորդը չը մերժեց ամբողջ դպրոցը դնել տեղիս ճիւղի վարչութեան տրամադրութեան տակ։

Սա առաջինը չէ, որ ռուս և վրացի հասարակութիւնը իրանց սիրալիր աջակցութիւնը ցոյց են տալիս թէ Բարեգ. Ընկերութեան տեղիս ճիւղին և թէ ծխ. դպրոցին, մասնակցելով ներկայացումներին և երեկոյթներին, զանազան պարտականութիւններ յանձն առնելով։

Շատ զոհ հեռացաւ մեծամասնութիւնը։ Դժգոհ էին միայն նրանք, որոնց կարծիքով՝ 75 կ.—1 ր. մուտքի վճար տալով իրաւունք ունէին ճոխ ընթրիք վայելել։

Մինչդեռ հաշ. միջնորդի ամուսինը շռայլութիւն էր համարում տրված համեստ ընթրիքն անգամ, աւելացնելով թէ օգուտ չի մնայ։

Հանդէսը մուտք ստացվեց 344 ր. 75 կ., ծախք՝ 129 ր. 7 կ., զուտ արդիւնք 215 ր. 68 կ։ Սաթ. Զաքարեան

ՄԵՐ ԳԻՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՑ

II

Շամախի-Սղնախ երկաթուղին, բաւական նաչափ բարձրացրել է մեր գիւղացիների տրամադրութիւնը։ Ինչպէս յայտնի է, այդ երկաթուղին պէտք է անցնի մեր գիւղի մօտով, համարեա թէ քերելով մեր հողերը։ Այդ պատճառով արդէն մի երկու ամիս առաջ մենք ուսեցել ենք մեր գիւղական ժողովը և միաձայն տուել ենք մեր համաձայնութիւնը երկաթուղու գծին տրամադրելի անելու ժողովրդական հողերից որ մէկ հողաբաժինն որ հարկաւոր լինի։ Ցիշեալ ժողովից մօտ մէկ ամիս յետոյ մեր գիւղի ներկայացուցիչները, գաւառապետի հրաւէրով, ներկայացել ես վերջինիս և իրանց ստորագրութիւններով տուել են

նվազեցնել։

Գր. Խալաթեանցը, որ ծանօթ էր բոլոր կատարված ուսումնասիրութիւններին, հաստատեցնելով, որ մինչև լիակատար կերպով չուսումնասիրվին Խորենացու գործածած բոլոր աղբիւրները, հայերէն թէ ուրիշ լեզուներով՝ չէ կարելի վերջնական եզրակացութեան գալ պատմութեան արժէքի և գրութեան ժամանակի նկատմամբ։ Եւ նա ձեռնարկեց մի ծանր ու պատասխանատու աշխատանքի, որի արդիւնքը նա հրատարակեց երկու մեծ հատորով, ռուսերէն լեզվով, որոնք կազմեցին նրա մագիստրոսական և դոկտորական քննութիւնների աշխատանքները։ Առաջին հատորի մէջ (1896) հեղինակը մանրամասն քննութեան ենթարկեց Խորենացու առաջին գիրքը և երկրորդի մի մասը—որտեղ, իրօք կամ ըստ ենթադրութեան, Խորենացին օգտվել է հայ ժողովրդական վէպերից։ Երկրորդ հատորի մէջ (1903) նա նոյն սիստեմով քննեց Խորենացու պատմութեան մնացած մասերը։ Խալաթեանցի եզրակացութիւնները շատ աննպաստ էին Խորենացու համար։ Ցիշենք ամենագլխաւորները։ ըստ Գր. Խալաթեանցի՝ Խորենացին չէ օգտվել հայ ժողովրդական վէպից, այլ ինչ որ այս անունով տալիս է՝ մեծ մասամբ ինքն է ստեղծել, վերամշակելով ուրիշ հեղինակների և մանավանդ Ս. Գրքի նիւթերը։ Նա հինգերորդ դարի հեղինակ չէ, այլ ոչ վաղ քան ութերորդ դարի։ Նա իր յիշած աղբիւրներից չէ օգտվում հարազատութեամբ, այլ փոփոխում, աղավաղում է տենդենցիոզ կերպով։ Նա օգտվում է շատ աղբիւրներից, որոնց չէ յիշում (ծածուկ աղբիւրներ), որպէսզի թագցնէ իր գրութեան ժամանակը։ Նրա պատմութիւնը իբրև պատմական աղբիւր արժանաւոր չէ։ բայց իբրև մատենագրական գործ անտարակոյս ունի և կը պահպանէ իր արժանիքը։

Կարելի է չը համաձայնել հեղինակի նախաեալ սուբեկտիվ վերաբերմունքին դէպի իր քննած պատմութիւնը, որի շնորհիվ նա փատերը աշխատում է յարմարեցնել իր տեսակէտին։ կարելի է վիճել նրա այս կամ այն եզրակացութեան դէմ. բայց և այնպէս պէտք է խոստովանել, որ հանգուցեալ գիտականը այս երկու հատոր աշխատութեան մէջ խորապէս ուսումնասիրել է Խորենացու պատմութեան վերաբերեալ բոլոր նիւթը, թէ հին (հայ և օտարազգի) մատենագրութեան և թէ վերջին դարերի հայագիտական գրականութեան մէջ. որ նա, անկախ ընդհանուր եզրակացութիւններից, որոնք կարող են վիճելի լինել՝ շատ տեղ աջող կերպով լուսաբանել է Խորենացու պատմութեան որոշ մասերը. որ նա տվել է բանասիրութեան ամենից լիակատար խմբագրութիւնը այն գրվածքների, որոնք ծառայել են կամ կարող էին ծառայած լինել Խորենացու համար իբրև աղբիւր իր պատմութեան։

Այս և ուրիշ յատկութիւնների շնորհիվ յիշեալ երկու հատորները միշտ պատվավոր տեղ պիտի բռնեն Խորենացու պատմութեան գրականութեան մէջ և ամենայն իրավամբ պէտք է համարվեն հանգուցեալի գլուխ գործոցը։

Հին մատենագրութեան վերաբերեալ աշխատանքների մէջ յիշատակելու է Գր. Խա-

գիւղի համաձայնութիւնը, նաև արտայայտել են գիւղի ցանկութիւնը Շամախի—Սղնախ երկաթուղու շուտափոյթ իրագործման համար։ Այդ երկու դէպքերը որոշ չասսեր են, որ յիշեալ երկաթուղին վաղ կամ ուշ պէտք է վրդովի մեր թմրած և կիսաւեր միջավայրի խաւար կեանքը։

Մեր մէջ չը կան երկաթուղու վերաբերմամբ միջնադարեան գաղափար ունեցողներ. ընդհակառակն ամենքս խորապէս գիտակցում ենք նրա առաջ բերելիք բարիքները և անհամբեր սպասում ենք լսելու նրա սուլոցը։

Մեր միջավայրը՝ Շամախին իր շրջակայ գիւղերով գնալով տնտեսապէս քարուքանդ է լինում երկու արհաւիրքներից՝ երկրաշարժից և պարբերական անբերրիութիւնից։ Բացի այդ՝ մենք բաւականաչափ հեռու ենք գտնվում հաղորդակցութեան կուլտուրական միջոցներից, որով բնականաբար զրկվում ենք այն բոլոր բարիքներից, որ կարող էինք ստանալ դրսի կապիտալի՝ դէպի մեր միջավայրը հոսելուց։ Իսկ այդ դրութիւնը աստիճանաբար իջեցնում է մեր մէջ եռանդը, պակասեցնում մեր մէջ ձեռներէցութեան ոգին և մատնում մեզ ծուլութեան գիրկը։ Արդարև, յաճախ առիթ ենք ունեցել լսելու կօմպանտնտ անձնաւորութիւններից, որ շատ ֆիրմաներ, մանաւանդ գինեվաճառներ, մեր միջավայրը չեն այցելում սոսկ այն պատճառով, որ հաղորդակցութեան կանոնաւոր միջոցների բացակայութեան պատճառով նրանք նիւթական զգալի կորուստներ են ունենում։

Մեր միջավայրի կեանքից մեր ակնարկած բոլոր անպատեհութիւնները, յուսով ենք, պէտք է վերացնի Շամախի-Սղնախ երկաթուղին։ Նա դրսից բերած կապիտալ ցոյց տալով՝ մեզ պէտք է հրապուրի և շինարար աշխատանքի կոչի։ Նա մեր մէջ պէտք է զարթեցնի ձեռներէցութեան ոգին, որով ինքն ըստ ինքեան պէտք է բարձրացնի ներկայումս ընկած մեր տնտեսութիւնը։

Ու մենք յուսով սպասում ենք տեսնելու այդ օրը...

Ի նկատի ունենալով, ուրեմն, որ Շամախի-Սղնախ երկաթուղին պէտք է անցնի մեր գիւղի մօտով, մեր աչքում էլ աւելի է բարձրանում այն խճուղու նշանակութիւնը, որը ներկայումս կապում է մեր գիւղը Շամախու հետ։ Այդ խճուղին հազիւ մի տարի է, ինչ մենք շինել ենք և դեռ լիովին չենք աւարտել։ Որովհետև արդէն շինված-պատրաստի խճուղին առանց հրաշագործութեան և խնամքի ենթակայ է խանգարմանց, ուստի համաձայն գաւառապետի կարգադրութեան և մեր գիւղացիների միահամուռ ցանկութեան՝ նրա նորոգութիւնը երեք տարի ժամանակով պէտք է որ կապալով տրվի մասնաւոր անձանց։ Այդ իմաստով փետրվարի 12-ին մեզ մօտ պէտք է լինի աճուրդ։ Արդէն կազմված է նախահաշիւ, որի համաձայն գիւղը տարեկան պէտք է ծախսի մինչև 1300 բուբլի։ Երեք տարուց յետոյ խճուղին պէտք է անցնի հողատիրական բանկի իրաւասութեան տակ։ Խճուղին ունի մօտ չորս վերստ երկարութիւն՝ սկսած գիւղի կենտրոնից և վերջացած Զօղալա-Հայ գետակի մօտ։

Ի պատիւ մեր գիւղացիների կարող ենք ասել, որ նրանք խճուղու անվթար պահպանութեան համար որոշել են ոչ մի ծախքի առաջ կանգ չառնել, որովհետև նրանք վերագրում են նրան փառաւոր դեր գիւղի արդիւնաբերութեան գործում երկաթուղու առաջին սուլոցից անմիջապէս յետոյ։

Հայրենակից

լաթեանցի կարևոր հրատարակութիւնը Մնացորդաց գրքերի՝ վաղեմի թարգմանութեամբ, որ գիտական աշխարհին անծանօթ էր։ Այս հրատարակութիւնը ցոյց տվեց, որ բացի Աստվածաշնչի ծանօթ սուվորական հայերէն թարգմանութիւնից՝ գոյութիւն է ունեցել և ուրիշ, ավելի հին և շատ ընտիր թարգմանութիւն, ամենայն հավանութեամբ՝ ասորական օրինակից։ Այս հրատարակութիւնը գիտնականների ընդհանուր ուշադրութիւնը գրավեց՝ թէ Աստվածաշնչի թարգմանութեան հարցի, թէ բնագրաքննութեան և թէ զուտ հայերէն լեզվի բառագանձի նկատմամբ։

Հանդուցեալ Գր. Խալաթեանցի վերջին աշխատութիւն էր «Ուրվագիծ Հայաստանի պատմութեան» (Очеркъ исторіи Арменіи), որի առաջին հատորը, (առաջին շրջան, մինչև Տրդատ մեծի թագավորութիւնը, կամ քրիստոնէութեան մուտքը Հայաստան) նա վիմագրութեամբ հրատարակեց 1910 թվին, իբրև համալսարանական դասախօսութիւններ։ Այս աշխատութիւնը հիմնված է սեպագիր արձանագրութիւնների, օտարազգի հին և նոր հեղինակների տված տեղեկութիւնների և գիտութեան նորագոյն տվեալների վրա և ամենից լիակատար և լավագոյն երևն է իր տեսակի մէջ։ Ծանր կորուստ է հայոց պատմութեան համար, որ հեղինակի մահվամբ այս աշխատութիւնը ընդ միշտ կիսատ մնաց։

Գր. Խալաթեանցի մասնագիտութեան երկրորդ ճիւղն էր, ինչպէս ասացինք, հայ ազգագրութիւնը։ Բացի առանձին գրված-ներից՝ հանդուցեալը 1887-ին տպագրեց «Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորութիւնների»։

Այս աշխատութիւնը, որ կազմված էր գիտական ժամանակակից պահանջների համաձայն, պարունակում էր 500-ից ավելի հարցեր, որոնցով զեկավարվելով բանահավաքները պէտք է տեղեկութիւններ ժողովէին՝ ժողովրդի կեանքի բազմատեսակ կողմերը ուսումնասիրելու համար ազգագրական տեսակէտից։ Եվ յիրավի, Գրիգոր Խալաթեանցի «Ծրագիրը» մի ուղեցոյց և դավ երիտասարդ ազգագրագէտների համար, հեղինակի խօսքերով՝ «ունեցավ իր ազդեցութիւնը ոչ միայն բանահավաքների թիվը զգալի կերպով ավելացնելում, այլ մանավանդ նրանց աշխատութիւններին ոգի սիստեմ և գիտական դասավորութիւն հաղորդելում» (Նիւթեր հայ ազգ. պատմութեան)։ Առանձնապէս յիշում է հեղինակը, որ ազգագրագէտ Ե. Լալայեանցը իր «մանրակրկիտ, շատ ընդարձակ և զարմանալի խղճմտավոր» ազգագրական ուսումնասիրութիւնների մէջ միշտ առաջնորդվել է նրա յօրինած ծրագրով, այնպէս որ իրավամբ կարելի է ասել, թէ Գր. Խալաթեանցը հիմնադիր է եղել մեր մէջ գիտական հայ ազգագրութեան և ունեցել է ի միջի այլոց այնպիսի մի բեղմնավոր արդիւնք՝ ինչպիսին է «Ազգագրական Հանդէսը»։ Բացի սրանից Գր. Խալաթեանցը խմբագրել է Էմինեան ազգագրական ժողովածուի բոլոր հատորները, որոնք թանգագին նիւթեր են բովանդակում հայ ազգագրութեան համար։ Էլ չենք ասում այն, որ այս գիտական ժողովածուի հրատարակութեան գաղափարը ամողջ ինքը հեղինակն է եղել։

Նոր գրականութեան մէջ էլ անմասն չէ մնացել հանգուցեալ պրոֆեսորը։ Նրա խմբագրութեամբ ու առաջաբանով լոյս տեսան, տիկ. Վ. Քանանեանի հրատարակութեամբ, Գամսուռ Քաթիպայի երկասիրութիւնները երկու ընդարձակ հատորով (1893), որ այնպէս շուտով սպառվեցին։ Սրանից առաջ նա երկու անգամ տպագրեց նոյն հեղինակի հատընտիր բանաստեղծութիւնները (1832 և 1893 թ. թ.)։

Գր. Խալաթեանցը աշխատակցում էր մի քանի ռուս և գերմանական գիտական հանդէսների, Վիէննայի Մխիթարեանների «Հանդէս Ամսօրեայի», ինչպէս և Կովկասի հայ պարբերական մամուլին—«Մուրճի» (Արաքսիանեանի հրատարակութեան ժամանակ), «Արարատի», «Մշակի», «Արձագանքի» և այլն։ Լազարեան ճեմարանում նա գլխավոր գործիչն էր այն բոլոր ձեռնարկութիւնների մէջ, որոնք կապ ունէին հայագիտութեան հետ, օր. նա էր լինում Քանանեան մրցանակաբաշխութեան առաջարկված աշխատութիւնների քննողը, նրա հանդիսությամբ՝ լուսանկարչութեամբ հրատարակվեց (իշխ. Արամելիք Լազարեանի հաշվով) Լազարեան ճեմարանի նշանավոր հնութիւնը—885 թվականի ավետարանը և այլն։

Գր. Խալաթեանցի կեանքը մի անդադրում աշխատանք էր յօգուտ մայրենի գրականութեան, և նրա բազմաթիվ բարեխիղճ աշխատութիւնները անմոռանալի կերպով դրոշմում են նրա անունը ականավոր հայ ազգի հայագէտների շարքերում—Ք. Պատկանեանի և Մ. Էմինի կողքին, իբրև նրանց արժանավոր յաջորդ և զուգահավասար ընկեր։

Ստ. Մազխասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

✦ Փոխարքայի խորհրդի անդամ Ն. Զունկովսկին ամսիս 16-ին արագ գնացքով Պետերբուրգ մեկնեց։

✦ Ուսումնարանական շրջանի հոգաբարձուն Փոխարքայի թոյլտուութեամբ միջնորդութիւն է յարուցել ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առաջ, որպէսզի Թիֆլիսի կանանց բարձր դասընթացքներին տարեկան 10,000 բուբլի նպաստ տրվի վնասները ծածկելու համար։

✦ Պետական Դումայի կովկասեան պատգամաւորները խնդրել են Դումայի ատենապետին շտապեցնել քննելու. Անդրկովկասի գիւղացիների և կալուածատէրերի միջև գոյութիւն ունեցող ժամանակաւոր-պարտադիր կանոնները։

✦ Պօստ-հեռագրային գլխաւոր Գ. Մուսսելիուս պաշտօնական գործերով մեկնեց Երևանի նահանգը։

✦ Փետրվարի 19-ին, գիւղացիների ճորտութիւնից ազատվելու 51-ամեակի տարելդարձի առիթով, Թիֆլիսի գպրոցական հաստատութիւններից շատերի մէջ տեղի կունենան գրական-երաժշտական ցերեկոյթներ և երեկոյներ։

✦ Երկրագործութեան դեպարտամենտը 4000 բուբլի է յատկացրել Ղարաեազի գաշտում կատարվելիք բամբակաբուծական աշխատանքներին՝ գործնական աշխատանքներով պարապողներ գրաւելու համար։

✦ Այսօր, ուրբաթ, Գրական-Գեղագիտական Սալոնի հերթական jour fixe-ը նուիրված է Պուշկինի յիշատակին, նրա ծննդեան 75-ամեակի առիթով։ Երաժշտական մասի զեկավարն է երգչուհի Ս. Ն. Նիկօլայեվա։ Մասնակցում են տ. տ. Բարսեղ, Օ. Դ. Մէջէմ, Իւ. Ի. Սպենդիարեան, Ս. Ն. Նիկոլայեվա, Ս. Ա. Հումմէլ, Ա. Օ. Նէմէտտի, Ե. Ն. Բախտ, Թ. Պ. Մելիք-Շահնազարեան, պ.պ. Վրոյր, Մելիք-Շահնազարեան, Բախտ և այլն։ Հրաւիրվում են Սալօնի սովորական հիւրերը՝ արուեստագէտներ, գրականագէտներ, գեղագէտներ, լրագրողներ իրանց ընտանիքներով։ Ոչ ոքի առանձին հրաւէր չէ ուղարկվում։ Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։ Այսօր կայանալու է և խորհրդակցութիւն Յովհաննէս Յովհաննիսեանի յօբելեանի առիթով։ Պատրաստվում են բեֆերատներ, խարակտերիստիկ քննադատութիւն Յովհ. Յովհաննիսեանի և նրա երկերի։ Սրանք կը կարդացվեն հետևեալ հրաւարակական jour fixe-ին, որ յատկացվելու է յօբելեար-բանաստեղծին։

✦ Այսօրվանից ոյժի մէջ է մտնում հացի հետևեալ սակագինը։ Փռնի հաց՝ 1-ին տեսակը ֆունտը՝ 4½ կօպ., 2-րդը՝ 4 կ. և 3-րդ՝ 3½ կ.։ Հաճարի հացի ֆունտն արժէ 3 կօպ.։ Թոնրի հաց՝ 1-ին տեսակը ֆունտը 5 կ., 2-րդը՝ 4½ կ. և 3-րդը՝ 3½ կօպէկ։ Բոլոր հացթուխները պարտաւոր են անհրաժեշտ քանակութեամբ հաց թխել բոլոր տեսակներից և որոշված ալիւրից։ Այս սակագինը ոյժի մէջ է մտնում փետրվարի 16-ից։ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը խնդրում է բոլոր քաղաքացիներից սակագնի նկատմամբ կատարված բոլոր զեղծումների մասին յայտնել ընդհանուր և կամ առևտրա-տնտեսական ոստիկանութեան գործակալներին, արձանագրութիւն կազմելու և օրինապանցներին պատասխանատուութեան ենթարկելու համար։ Ի լրումն յայտնենք, որ լաւագի ֆունտն արժէ՝ 1-ին տեսակը 5 կ., իսկ 2-րդը՝ 4½ կօպէկ։

✦ Կոմսուհի Ե. Ա. Վօրոնցովա-Դաշկովան շնորհակալութիւն է յայտնել միլիոնատէր Հ. Զ. Ա. Թաղիեվին ինվալիդների օգտին 10,000 բուբլի նուիրելու համար։

✦ Կօնեակ արտադրող Երևանի «Արարատ» ընկերութիւնը վաճառվում է Նուսսովի ֆիրմային 200,000 բուբլով։

✦ Մսավաճառների վրա III քաղաքամասում կազմված է 13 արձանագրութիւն, IV քաղ. 15 արձ., իսկ VIII քաղ. 8 արձանագրութիւն։

✦ Ա. Ս. Ղուլաձէն նշանակված է 10-րդ քաղաքամասի սանիտարական հոգաբարձու։

✦ Թիֆլիսի դումայական վերաքննիչ մասնախումբը իր փետրվարի 14-ի նիստում որոշել է ծանօթանալ քաղաքային այլևայլ հաստատութիւնների հետ և առաջին հերթին նշանակել է հոգեկան հիւանդների քաղաքային ապաստանարանը։

✦ Թիֆլիսի էլեքտրաքարշի էլեքտրական կայարանից կը վերցվի շոգեմեքենան և կը դրվի՝ այսպէս կոչված դիզել-մօտոր մեքենան, որով ընկերութիւնը տարեկան կը տնտեսէ վառելիքի նկատմամբ 85,000 բուբլի։

✦ Վանքի մայր տաճարի հոգաբարձութիւնը, թոյլտուութեամբ Եփրեմ եպիսկոպոսի, հրաւիրել է Բենիկ վարդապետին կիրակի օրերը, պատարագի ժամանակ, Մեծ-Պասվայ ընթացքում քարոզ խօսել։

✦ Առանձին գրքոյկով լոյս տեսաւ Յ. Սօլովեանի «Ես տիկին ունեմ...» մանկական պատկերը, հրատարակութիւն «Աղբիւր-Տարազի»։ Գրքոյկը նուիրված է «Աղբիւր» մանկական հանդէսի 30-ամեակին։ Գրքոյկը, որ մաքուր և լաւ թղթի վրա տպված հրատարակութիւն է, արժէ 10 կ.։

✦ Բժ. Մ. Գեղեվանովը դիմեց մի յայտարարութեամբ Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկերութեան վարչութեանը, խնդրելով թոյլատրել հրատարակելու հանգուցեալ բանաստեղծ Իլիա Ճավճավաձէի աշխատութիւնների լիակատար ժողովածուն։

✦ Արտասահման մեկնելուց առաջ երիտասարդ նկարիչ Ե. Քավթարաձէն ամսիս 19-ին Վրաց թատրոնում կազմակերպում է երեկոյթ, հետաքրքրական ծրագրով։

✦ Փետրվարի 15-ին երեկոյեան ժամը 8½-ին գտնված է 4-ամսեայ մի ընկեցիկ մանուկ, որը ուղարկված է Օլգինեան ապաստանարանը։

✦ Մի այլ ընկեցիկ մանուկ է գտնված նաև Դուշէթսկայա փողոցում։

✦ Երևանցի մսավաճառ Ասադ Աբասաղայիվը յայտնեց ոստիկանութեանը, որ գալով Թիֆլիս և իջևանելով «Իտալիա» հիւրանոցում, քնած ժամանակ, փետրվարի 13-ին, իր համարից անյայտ մէկը գողացել է 98 բուբլի։ Կասկածով ձերբակալված է Իսահակ Կարաջեվը, որը մտած է եղել Աղայեվի սենեակը։

✦ Բաքուի նախկին քաղաքագլուխ Բաեվսկին մերժել է կրկին քուէարկվել այդ պաշտօնի համար։ Նա Փոխարքային հրաժարագիր է ուղարկել։

✦ Բաքուի քաղաքային վարչութեան անդամ է ընտրված միաձայն Կուլիկովսկին։ Քաղաքագլխի համար առոչիկ որոշված է տարեկան 20,000 բուբլի, իսկ վարչութեան իւրաքանչիւր անդամին տրվելու է տարեկան 6000 բուբլի առոչիկ։

✦ Քութայիսի նահանգի կօօպերատիվ գործիչների շրջանում մտաք է յղացել այդ նահանգում գործող բոլոր համատան ընկերութիւնները միացնել և դրանցից ստեղծել մի խոշոր միութիւն։ Այդ նպատակով այս օրերս Քութայիսում տեղի է ունեցել մի խորհրդակցութիւն, մասնակցութեամբ քաղաքագլուխ Զրկովանիի։ Ընտրված է մի յատուկ մասնախումբ կանոնագրութիւն մշակելու համար։

✦ Փիլադելֆիայի (Հիւս. Ամերիկա) գիտութեանց ճեմարանը իր 100-ամեայ գոյութեան յօբելեանին մասնակցելու հրաւէր է ուղարկել Թիֆլիսի բուսաբանական այգուն։

✦ Ալէքսանդրօպոլի գաւառի Նալբանդ գիւղից մեզ գրում են հետևեալը. «Մօտ ժամանակներս մեր գիւղից դէպի հիւսիս, մօտաւորապէս 3 վերստ հեռաւորութեան վրա, «Արաբ-հայլասի» կոչված սարի մօտ (գիւղի սահմանում) մի նոր հանք է լոյս ընկել։ Գիւղացիներից ոմանք ասում են, թէ դա պղնձի հանք է, իսկ ոմանք էլ ասում են, որ երկաթի է։ Կան նաև ասողներ, որ դրսի թանգարժէք մետաղի հանք է։ Մի խօսքով, դժուար է որոշել հանքից ստացված մետաղի ինչ բան լինելը՝ մինչև մի մասնագէտ չը գայ և չը պարզէ այդ»։

✦ «Մշակի» № 32-ում տպված Պետերբուրգի թղթակցութեան մէջ ասված է՝ թէ դժիշկ Մ. Մուրադեանը անհետացել է։ Այդ տեղեկութիւնը դուրս է գալիս սխալ։ Բժ. Մուրադեանը մեկնել է Կովկասից դեռ Դաշնակցութեան գործի վերաբերեալ սկզբնական քննութիւնները սկսվելուց առաջ՝ իր անցաթղթով։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Դրաման

Մեծ հաճոյք պատճառեց հասարակութեանը Սլօբոդայի՝ «Տեղական կուռք» (der Kleine Herrgott) կատակերգութեան ներկայացումը, որ տեղի ունեցաւ չորեքշաբթի, փետրվարի 15-ին, Արտիստական թատրոնում։

Պիէսի մէջ կայ այն գաղափարը, թէ պէտք է կուռ մանկավարժութեան լճացած և քարացած ձևերի դէմ, մտցնելով նոր թարմ հոսանք կրթական գործի մէջ։

Ուսանելի և հետաքրքրական գաղափարի հետ զուգընթաց հանդէս եկաւ դերասանների համերաշխ գեղեցիկ խաղը։

Դերակատարներից ամենից աւելի այդ երեկոյ աչքի էին ընկնում Բօրիսովը, որ կատարում էր պիէսի կենտրոնական անձի՝ Շլագերերի դերը, և յետոյ Կոլօբովը, որ կատարում էր նոր հոսանքի ներկայացուցիչ պրոֆ. Վէյպերտի դերը։

Կանացի դերակատարներից աչքի ընկան Բուտկովսկայա և Եաբլօչկինա իրանց ոչ շատ խոշոր դերերում։

Ռուսական ներկայ դրամայի իւրաքանչիւր ներկայացումը նոր ապացոյց է տալիս, որ յանձին մեր քաղաքը եկած դերասանների մենք ունենք թատրօնական գործողների մի համակրելի և բարեխիղճ խումբ, որ վերաբերվում է բեմական արուեստին պատկառանքով և գիտակցութեամբ։ *

—

Օպերետը

Զորեքշաբթի, փետրվարի 15-ին օպերետային խումբը խաղաց Վալենտինովի «Կրքերի ալիքներում» պիէսը։

Նա հարուստ է երաժշտութեամբ։ Բայց այդ երաժշտութիւնը փոխ է առնված նոյնութեամբ զանազան օպերաներից և օպերետներից։ Դուք լսում էք կտորներ «Ֆաուստից», «Տրավիատայից», «Եւգենիյ Օնեգինից», «Կօրնվիլի զանգակներից», «Գիւղական պատուից» և այլն։

Խմբի մէջ կան ուժեղ ձայներ, որոնք կարողացան երգերի կտորները երգել բաւական աջողութեամբ։ Աչքի էին ընկնում՝ երգչուհի Սրէլ, երգիչներ՝ Միրաեվ, Զիլինսկիյ։ Իբրև օպերետային ոյժեր աչքի էին ընկնում Նուվալովա և Գլօրիա՝ հարուստ շարժուածքով, գեղեցիկ պարերով և արտայայտիչ խաղով։

Հաւանութիւն գտաւ և երգչուհի Սերբակայա, որ երգեց մի քանի գնչուական երգեր։

Շատ ծիծաղեցրեց հանդիսականներին օպերետային դերասանուհի Ժդանովան պատուած այրի կնոջ դերում։

Թէ երաժշտութիւնը և թէ խաղացողների անսամբլը խղճին նպաստաւոր տպաւորութիւն։

Սիրող

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Թրեն»ի գործնական ձեռնարկ նրա մշակութեան և շահագործման, պատկերազարդված. կազմեց Ն. Սիմէօնեանց. գինն է 25 կ.։

Սա մի գողարիկ գրքոյկ է, բաղկացած 63 երեսներից, զեղազարդված պաշտօնապէս 32, իրականապէս 34 բաւական աջող և նուրբ պատկերներով։

Այդպիսի մասնագիտական գրքոյկի կարիքը հայ գիւղատնտեսական կեանքում մեծ է, քանի որ մեր գրականութեան մէջ մի ինքնուրոյն նորութիւն է սա։

Գրքոյկը տալիս է ընթերցողին կամ թթենու մշակութեամբ պարապողներին բաւական ընդարձակ և բազմակողմանի ծանօթութիւններ և գիտական տեղեկութիւններ նրա մշակութեան, բազմակողմանի շահագործման, հիւանդութիւնների, սընկային ցաւերի, վնասատու մակաբոյծների, միջատների և կենդանիների ու դրանց ամենի առաջն առնելու միջոցները։

Գրքոյկի մէջ սպրդել են մի քանի սխալներ, որոնք, յամենայն դէպս, չեն նսեմացնում գրքի մասնագիտական նշանակութիւնը։ Սպրդած սխալներից նկատելի են, օրինակ, հետևեալները. գրքոյկի առաջին երեսի վրա փոխանակ Morae բառի՝ գրված է Moraceae։ Զոր թութի դիմաց լատիներէն գրված է Fructus Mori recentes, որը հիշդ չէ. պիտի լինի succus Mori (եր. 35)։

Ռուսերէն папоротникъ բոյսի թարգմանութիւնը հայերէն գրված է ծարիտոն և լատ. Filice mas (եր. 35), մինչդեռ հայերէն նրան անուանում են արջակողինք կամ արջաքիլուն և լատիներէն Aspidium Filix mas. իսկ ձարխոտի լատիներէն իսկական անունն է՝ Adiantus capillus Veneris։

Սրանք այնպիսի պակասութիւններ են, որ զուտ մասնագէտ բուսաբանները կարող են նկատել։ Աշխատասիրողի բուն նպատակն է եղել իր գրքոյկով նպաստել ոչ թէ սենեակում պարապող գիտնականներին, այլ հողի, ջրի և ծառի հետ գործ ունեցողներին, մանաւանդ շերամապահութեամբ պարապողներին։

Թթենին մեզ մօտ շատ տարածված լինելով, քչերն են նրա վրա լուրջ ուշադրութիւն դարձնում։ Այս գրքոյկը բաց է անում մեր առաջը նրա կեանքի մանրամասնութիւնը, նրանից բազմատեսակ շահվելու եղանակները, մանաւանդ հետաքրքրական է նրա հիւանդութիւնների և վնասատուների բաւական ընդարձակ նկարագրական և առաջը առնելու մասը, որ բռնում է գրքի 32 երես։

Խորհուրդ կը տայինք ամեն մի պարտիզատիրոջ ունենալ այդ գրքոյկը և իբրև թթենու մշակութեան ձեռնարկ՝ օգտվել նրանից։

Պրոֆիզոր՝ Աւ. Սարուխանեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

1) «Victus vos salutat», Միքայէլ Մանուէլեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 28, գ. 15 կ.։ 2) «Բանաստեղծութիւններ», Յակոբ Յակոբեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 140, գ. 50 կ.։ 3) «Զրկանքի յոյզեր» (երկերի ժողովածու), Կարէն Միքայէլեանի, Թիֆլիս, 1907 թ., էջ 212, գ. 50 կ.։ 4) «Զարան երեկոյ», Կարէն Միքայէլեանի, Մոսկվա, 1912 թ., էջ 151, գ. 60 կ.։ 5) «Գարեջուկ» (հին դարերի լեգենդա), ֆէերիա 1 գործ., 2 պատկեր (մանկական թատրոն), Ալէքսանդր Աբէլեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 16, յատկացված «Աղբիւր» մանկական ամսագրի։ 6) «Գրական նմուշներ», Լեոն Մանուէլեանի, Թիֆլիս, 1912 թ., էջ 381, գ. 1 ր.։ 7) «Էջմիածնական ինտրիգան և նրա հեղինակները» (վերջին կաթողիկոսական ընտրութեան գաղտնիքը), Ն. Քաջբերունու, Թիֆլիս, 1912 թ., էջ 80, գ. 20 կ.։ 8) „Старинныя армянскія надписи въ музеѣ общества исторіи и древностей въ Одессѣ“, Л. М. Меликсетъ-Бекова, Թիֆլիս, 1912 թ., էջ 22, գ. 25 կ.։ 9) „Teoria sul Genio e Follia“ Georg Wendel contro C. Lombroso, թարգմանեց Dr. R. Bazardjian, Պաղովա, 1911 թ., էջ 27, գ. 75 սանտիմ։ 10) „Metafisica positiva e positivismo metafisico“, Dr. R. Bazardjian-ի, Բոլոգնա, 1911 թ., էջ 8. 11) «Ազգագրական Հանդէսի» XXI գիրքը, Թիֆլիս, 1912 թ., էջ 240. 12) «Նոր-Դպրոց» շաբաթաթերթի 1911 թ. № № 37—40, 1912 թ. № № 1—2 և 3—4, Թիֆլիս։ 13) «Տաճար» շաբաթաթերթի 1911 թ. № № 49 և 50, Պոլիս։ 14) «Կոչնակ» շաբաթաթերթի № № 1, 2, 3 և 4, 1912 թ., Նիւ-Եօրկ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծ-Ղարաքիլիսա, 12 փետրվարի

Վաթսուն տարիներից ի վեր Փամբակի 45,000-ի չափ գիւղական ազգաբնակութեան համար Մեծ-Ղարաքիլիսայի դպրոցը եղել է ստնտու մայր և աղբիւր մտաւոր-բարոյական կրթութեան։ Դրուատել այդ հիմնարկութեան մատուցած ծառայութիւններն ու շեշտել նրա կատարած դերը՝ անտեղի ենք համարում։

Ամսիս 11-ին, շնորհիւ ոչ-պատեհ պատահակութեան, վաթսունամեայ պատկառելի հասակ ունեցող դպրոցի շէնքը, որ պատրաստարում և ստուգատում էր իր ծոցում 600-ի չափ երկսեռ մանուկներ, հրդեհի զոհ դարձաւ իր բոլոր կահկարասիքով և ուսումնական պիտոյքով և ներկայիս այլ ևս մոխրակոյտի է վերածված։

Մեծ-Ղարաքիլիսայի դպրոցի հոգաբարձութիւնը, իբրև զեկավարը մի մեծ գաւառակի միակ կուլտուրական հիմնարկութեան, շրջանիս ամբողջ հասարակութեան և սև ճակատագրի դժբաղդ տնօրինութեամբ փողոց շպրտված 600 երկսեռ երեխաների կողմից խնդրում է հայ հասարակութեանը՝ աջակցել իրան նոր դպրոցական շէնք կառուցանելու գործում, նիւթական օժանդակութիւն հասցնելով։

Նախագահ խորհրդի՝ Ա. Ռասամեան
Անդամ-քարտուղար՝ Մ. Խանզադեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

✦ Ռուսական պետական բիւջէն Դումայում կը սկսվի քննվել մարտի 1-ից և կաւարտվի հաւանօրէն մարտի 17-ին։

✦ «Нов. Время»-ն հաղորդում է, որ հարցաքննութիւն կատարվեց Դաշնակցութեան գործի փաստաթղթերը կորչելու առիթով։ Հարցաքննվեցին նաև Լրժինը, թարգման Նադիրաձէն, էկսպերտները, օրեր քարտուղարը և նրա օգնականները։ Պարզվեց, որ յունվարի 22-ին մեղադրվողներից մէկը յայտնել է, թէ իր յուշատետրի երեսներից մէկը հանված է։ Լրժինը ստուգեց յուշատետրերը և երևան հանեց, որ Դէորգեանի գրքոյկից պոկված է 5 թերթ։ Փետրվա-

ի 4-ին էկսպերտները ստուգեցին Զաւրեանի յուշատետրը. Բոլոր երեսները ամբողջ էին։ Էկսպերտների սենեակը ոչ ոքի թոյլ չէր տրվում և այն պահպանվում էր ժանդարմներից։ Սակայն, երբ պաշտպանող կողմի պահանջով յուշատետրը բերին նախագահի դահլիճը, նրա 4-րդ երեսը չերևաց։ Կասկածում են մեղադրվող Աւտաթեւանին մի տառը խարդախելու մէջ։ Դատավարութիւնը բաւականին ձգձգվում է։ Հարցաքննվում են 10-րդ խմբակի վկաները։

✦ «Рѣчь»-ը Դաշնակցութեան գործի մէջ մեղադրվողներին ի նպաստ յօդուածներ է տպում։

✦ «Баку»-ին հեռագրում են Պետերբուրգից. «Դաշնակցութեան» գործի դատավարութեան նախագահ սենատոր Կրիվցովը հեռացրեց յայտնի դատական քննիչ Լրժինին «Դաշնակցութեան» գործի փաստաթղթերը պահելու պաշտօնից։ Զաւրեանի գրքոյկը հանված է դատական ապացուցագրերից, որովհետև նրա չորրորդ երեսը պոկված է։

✦ Պարզվում է, որ Իտալիան պարտաւորված է եղել Ֆրանսիայի առաջ չը ռմբակոծել Բէյրութը։ Եւ այժմ, երբ Բէյրութի ռմբակոծութիւնը կատարված իրողութիւն է, պէտք է լուրջ միջադէպ սպասել Ֆրանսիայի և Իտալիայի միջև։ Քաղաքական գործիչները հեռու չեն նոյնիսկ պատերազմի մրցքից։

✦ Հաստատվում է միջազգային մարմին, իտալցիների գործելակերպը՝ Բէյրութը ռմբակոծելու հարցի նկատմամբ՝ քննելու համար։

✦ Եւրոպական աղբիւրներից բղխող տեղեկութիւնների համաձայն, մահմեդական խուժանը Բէյրութը ռմբակոծելուց յետոյ, կոտորած է սկսել քաղաքի քրիստոնեայ ազգաբնակութեան մէջ։ Սպանվածների և վիրաւորների թիւը խոշոր է։ Պետութիւնները պատրաստվում են նօտա ուղարկել այդ առիթով Բ. Դրան։

✦ Թիւրք մոլեռանդ ազգաբնակութիւնը սաստիկ զայրացած ու գրգռված է Կ. Պոլսում ընդդէմ քրիստոնեաների։ Վերջին դէպքերը ազդում են մահմեդականների ֆանատիկոսութեան վրա։ Ցուզիչ տեղեկութիւններ ստացվում են նաև գաւառներից։ Կառավարութիւնը ըստ երևոյթին միայն ձեռք է առնում նախազգուշական միջոցներ։

✦ Հաստատվում են Վիլհելմ կայսրի և իտալական թագաւորի տեսակցելու լուրերը, որ տեղի է ունենալու Վենետիկում այս գարնանը։

✦ Պարսից կառավարութիւնը վերադարձնում է խոշոր բէակցիօներների կալուածքները, որ յարքունիս էր գրաւել Շուստերը։

✦ Թաւրիզից ռուս զօրքերի մի մասը վերադարձաւ Ռուսաստան։

✦ Ռուսաց բիւջէտային մանաժողովի տեղեկութիւններից երևում է, որ պարսկական արշաւանքը ցայսօր ռուսական պետական գանձարանին նստել է 4 միլիոն ռուբլի։

✦ Ֆրանսիական միխիտարների խորհուրդը վճռեց ընդմիշտ արգելել բարեգործական վիճակախաղերը։

✦ Չինական նոր կառավարութիւնը վճռել է արտաքսել բոլոր գերմանացի հրահանգիչներին և նրանց տեղ հրաւիրել Ֆրանսիացիներին։

✦ Չինական նոր կառավարութեան կազմակերպութեան գործի աւարտումից յետոյ մի պատուիրակութիւն Սունեատսէնի գլխաւորութեամբ այցելելու է Եւրոպա՝ միջնորդելու պետութիւնների առաջ ճանաչել հանրապետութիւնը։ Պատուիրակութիւնը առաջինը կայցելէ Ռուսաստան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ. 15 փետրվարի

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎՍԿ։ Ժողովրդական տանը մի անյայտ մարդ կրակեց ատրճանակից և գոռաց՝ «հրդեհ»։ Հազարաւոր հասարակութիւնը սարսափահար նետվեց դէպի ելքերը։ Կան վնասվածներ։

ՖԱՐՕ (Փորտուգալիա)։ Երկու նաւերի ընդհարման ժամանակ խեղդվեցին 6 մարդ։

ՐԻՕԱ։ Այրվեց Կուզնէցովի գործարանի բաժանմունքը։

ԱՐՄԱՒԻՐ (պատահական)։ Փետրվարի 12-ին 13,000 անատէրեր, գործարանատէրեր, տանմանդրականներ, զինուորականներ և քաղաքացիներ միաձայն որոշեցին միջնորդել ուր հարկն է՝ Արմաւիրը քաղաքի վերածելու մասին։ Ընտրվեց յատուկ պատգամաւորութիւն։

ՄՈՍԿՎԱ։ Գրաւվեց «Голосъ Москвы» լրագրի № 37-ը։

ՍՏՕԿՀՕԼՄ։ Կրօնպրինցուհին աջողութեամբ տղայ ծնեց։

ՎԻԼՆՕ։ Կալուածատիրուհի Նարբուտը վանդակաւոր կերպով ատրճանակից վիրաւորեց կալուածատէր կոմս Վլադիմիր Տիշկեվիչին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ,

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գեղեցկութիւնը բարձր կատարելութեան է հասած.
№4711 ՎԱՐԴԻ ԲԻՒՐԵՂԵԱՅ ՍԱՊՕՆԸ
երեսի կաշուն և գոյնին տալիս է այն քնքշութիւնը, վարթութիւնը և առաձգականութիւնը, որոնք համարվում են ամենաբարձր գեղեցկութեան իսկական նշաններ։ Կտորը 25 կոպ.։ Կայ ամենուրեք։
Ֆերդ. Միւլգենս պարֆիւմէրիա № 4711
Կէօլն-Ռէյնի վրա։ Բիդա։ Հիմնված 1792 թ.։

(M. 28759/28782) 8—4

Լոյս տեսաւ և վաճառվում է հռչակաւոր Քրանսիացի գրող
ՎԻԿՏՕՐ ՀԻԻԳՕՅԻ
ԻՆՆՍՈՒՆ-ԵՐԵՔ
նշանաւոր վէպի հայերէն թարգմանութիւնը
„ԱՐՕՐ“ ամսագրի
հրատարակութեամբ
—o—
Այս կլասիկական չքնաղ վէպը, որի նիւթը վերցված է ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից, պէտք է կազմէ ամեն մի մտաւոր աղարանի զարդը և լինի ընթերցանութեան ամենացանկալի նիւթ։
ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.
Ի նկատի ունենալով, որ տպված է միայն 400 օրինակ, ուստի ցանկացողները պէտք է շտապեն վաղօրօք ստանալ, ուղարկելով իրանց պահանջը և դրամը «Մշակի» խմբագրութեան։
Գիրքը բաղկացած է 432 մեծադիր էջերից։
0—19

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՔՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Գ. Մ. ՇԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
Ի. Ա. ՓՐԱՆԿ—9—2 ժ. ատամների բուժումն, լցնելը (պլոմբա) և արհեստական ատ.։
ԵՐԵԿՈՆՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Ի. Ա. ՓՐԱՆԿ—5—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Հրաւերները ձրի։ Համաներգի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վիրահատ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—16

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ
ԱՅՆ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ
Նեվրասթենիայով, սեռական թուլութիւնամբ, զառամութիւնամբ, իստէրիկայով, նեվրալգիայով, սակաւարիւնութիւնամբ, բոքախտով, սիֆիլիսով, սնդիկային բժշկութիւնն հետեւանքներով, սուտի հիւանդութիւններով (չաղութիւն, սրտի պնդախտութիւն, սրտի բարախտում, պէրէրոյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացումով, ալկոհոլիզմով, ոգեսարի հիւանդութիւնամբ, կարուածներով, հիւանդութիւններից առաջացած թուլութիւնամբ, յոգնածութիւնամբ և այլն։
Օրէ-ցօր ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերարերմամբ շատացող պահանջը առաջ է բերել բազմաթիւ փորձարկութիւններ։ Այդ պատճառով իսկ, մենք պարտք ենք համարում նախազգուշացնել հիւանդներին նմանօրինակ մէջոցներից։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր սին՝ վերարերում են բացառապէս ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, դրա համար և հարկաւոր է ուշադրութիւն դարձնել «ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ» անուան վրա, որովհետև ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ գինը 3 ռուբլի է։
Ցիշեալ նմանողութիւնների սակաւարժէքութիւնը պարզելու համար հրատարակված է առանձին բրոշիւր, որը ուղարկվում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերարերմամբ եղած նոր գրականութեան հետ միասին՝ բոլոր առաջին պահանջման։
ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ
ՊՐՕՖԵՍՍՕՐ ԴՈԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ
Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում, В. О., 7 лин. 18.
(П. 1265) 12—5

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

„ԳԻՐ“
ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նոր բառագիրք հայերէն լեզուի պակերազարդ, Գաբամաճեան 3 ր. 50 կ.
Առձեռն բառարան հայկազեան լեզուի 4 ր.
» » ֆրանսերէնից հայերէն, Ոսկեան 4 ր. 50 կ.
» » ֆրանսերէնից հայաշխարհիկ, Նուպարեան 3 ր. 50 կ.
Գրպանի բառարան ֆրանսահայ, Յովհաննիսեան 2 ր.
Բառագիրք գերմաներէնից-հայերէն, Կոյլաւ 6 ր.
Գործնական բառարան անգլիերէնից հայերէն, պատկերազարդ, Փափազեան 7 ր.
Բառարան հայերէնից-ռուսերէն, Դաղբաշեան 6 ր.
» ռուսերէնից-հայերէն 8 ր.
» » » Թումանեան Յար. 75 կ.
» հայերէնից-ռուսերէն 1 ր.
Կարելի է ստանալ կազմած, զանազան գներով։
Լոյս է տեսել «ԳԻՐ» գրախանութի 1912 թուի գրացուցակը և ուղարկվում է ձրի։
Դիմել՝ Тифлисъ, Книжный маг. „ГИРЪ“.

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳԻ“
վերջին հրատարակութիւնները.
ԳՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ, յարմարեցած «Ռուսահայ գրականութեան պատմութեան» 1 ր.
ԵՂԻԵՇ, «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ըստ անձնացեցոյն օրինակի 50 կ.
ՍԱՏԱՆԱՑ, Մօսասանի, թարգմ. Ս.-ի 10 կ.
ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Դ. պրակ Լ. Մանուէլեանի 50 կ.
Դիմել՝ Тифлисъ, Книжн. магазинъ „Гутенбергъ“ Г. И. Галустяну. 95. 2—2

ԲԺԻՇԿ
Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒՐԱՐԵԱՆ
(ՏԷՐ-ՄՈՎՍԻՍԵԱՆ)
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ
(Մանագիտ. ԹՈՐԵՐԻ հիւանդութիւններ)
Ընդունե- (առաւօտեան ժ. 12—1-ը։
լութիւնը (երեկոյեան ժ. 4—6-ը։
Բէրբուտովսկայա, № 66.
(շ.ե.) 130. 100—72

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեմինսկայա փողոց, № 8.
(կ. չ.) 416. 100—80

ՄԵԾ ՔԱՐՏԷԶ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
✦ ԵՒ ✦
ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
Որոն վրայ զանազան գոյներով նշանակված են բոլոր հին և նոր անուններն ու վարչական բաժանումները, ինչպէս նաև գրացի երկիրներու պատմական սահմանները, ծովերը, լիճերը, գետերը, լեռներն և իրենց բարձրութիւնները, և այլն և այլն։
Հայ տպագրութեան չորսդարեւրամեակին առթիւ և գիտական վերջին հետազօտութեանց համաձայն՝ պատրաստեց Կ. Ց. ԲԱՍՄԱՋԵԱՆ։
Ով որ այժմէն բաժանորդ կը գրուի, կ ա ն խ ի կ կը վճարէ՝ 4 ռուբլի=10 ֆրանկ=2 դոլար։
Տպագրութենէն ետք գինը կը բարձրանայ 15 ֆրանկի։
10 բաժանորդ գտնողը մէկ օրինակ նուէր կը ստանայ։
Քարտէզին մեծութիւնն է՝ 1 մետր 55 սմ. լայն և 85 սմ. բարձր։
Չափն է՝ 1:1,000,000, այսինքն՝ 1849-ին Վենետիկ հրատարակուած Հայաստանի քարտէզէն 2½ անգամ աւելի մեծ։
Դիմել՝ ուղղակի հեղինակին.—Basmadjian, 9, Rue Gazan. Paris.
99. 1—1

„ՊԱՏԱՆԻ“ ԱԼՄԱՆԱԽԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ
որոշել է տալ երկու մրցանակ՝ մէկը ոտանաւորի, միւսը արձակ գրուածքի (պատմուածք կամ պատկեր) համար, որին մասնակցելու են այժմեան սկսնակ գրողները, որոնք ասպարէզ են եկել 1909 թ. ոչ վաղ։
Նիւթեր ընդունվում են հետեւեալ պայմաններում.
1) Արձակ գրուածքի ձեռագիրը լինելու է սովորական տետրակի ծաւալից ոչ աւելի, իսկ ոտանաւորը՝ մինչև հինգ տուն։
2) Նիւթեր պէտի ուղարկել մինչև առաջիկայ մարտի 15-ը անստորագիր. հեղինակների անունները պէտք է լինեն առանձին ծրարում՝ ներփակված։
3) Առհասարակ մրցանակի համար ուղարկվող ծրարների վրա պէտի գրել՝ «մրցանակի համար» և ուղարկել խմբագրութեան հասցեով Тифлисъ, Сурпъ-Минасскій пер. № 26, Мисаку Эприкяну.
Մրցանակի արժանացած հեղինակների անունները պէտի յայտնվեն միմիայն այդ առիթով կազմակերպվելիք գրական-երաժշտական երեկոյթում, և գրուածքները կը կարդացվեն հանդիսականների առաջ։
101. 1—1
«ՊԱՏԱՆԻ» ալմանախի խմբագրութիւն

ОТКРЫТА ПОДПИСКА Н. 1912 Г. (23-й г. изд.)
Подписной годъ считается съ 1-го ноября 1911 г. по 1-е ноября 1912 г.
Природа и Люди
Журналъ «Природа и Люди» Мин. Нар. Просвѣщ. допущенъ въ учительск. библіотеки низшихъ учебныхъ заведеній, въ ученическ. библіотеки средн. учебн. зав. и город. училищъ, въ безпл. народн. читальни и библіотеки.
52 №№ художественно-иллюстрированнаго журнала.
Романы, повѣсти и разсказы. Живописн. путешествія по всѣмъ частямъ свѣта. Описанія чудесъ и явленій природы. Очерки по всѣмъ отраслямъ знанія. Новѣйшія открытія и изобрѣтенія. Бесѣды по медицинѣ и гигіенѣ. Спортъ во всѣ времена года. Конкурсы и разнообр. задачи на преміи и т. п.
БЕЗПЛАТНЫЯ ПРИЛОЖЕНІЯ: абонементъ № 1, или № 2, или № 3, по выбору г.г. подписчиковъ:
Абонементъ № 1
40 книгъ 8.000 страницъ
БОГАТО ИЛЛЮСТРИРОВАННАГО ПОЛНАГО СОБРАНІЯ РОМАНОВЪ безсмертнаго французскаго писателя
А. ДЮМА
Подъ редакціей П. В. БЫКОВА.
Едва ли существуетъ уголокъ цивилизованнаго міра, гдѣ бы не знали и не любили этого короля французскихъ романистовъ. Однако, на русскомъ языкѣ до сихъ поръ не было полнаго собранія его произведеній. Нѣкоторые романы его никогда не переводились на русскій языкъ. Наше изданіе тѣмъ болѣе цѣнно, что въ немъ будетъ помѣщено свыше
1.000 иллюстрацій.
Такимъ образомъ, наше изданіе является ЕДИНСТВЕННЫМЪ полнымъ, роскошно иллюстрированнымъ.
40 книгъ полн. собранія романовъ Дюма (первая половина) будутъ заключ. слѣд. произведенія:
Тайный заговоръ.—Ущелье діавола.—Графъ Монте-Кристо.—Приключенія Джона Девиса.—Три мушкетера.—Двадцать лѣтъ спустя.—Виконтъ де-Бражелонъ.—Женская война.—Черный тюльпанъ или плѣнникъ Левенштейнскаго замка.—За королеву (Шевалье д'Арманталь).—Ожерелье королевы.—Тысяча и одинъ призракъ.—Калабрійскіе бандиты.—Анжъ Питу.—Невѣста республиканца.—Вѣрность до гроба.—Путешествіе Пайо.—Мюратъ.—Петръ Жестокій.—Приключенія Маріона.
Остальныя 40 книгъ полнаго собранія сочиненій Дюма будутъ даны въ 1913-мъ году.
Абонементъ № 2
24 книги ПОЛНОЕ ИЛЛЮСТРИР. 4,800 стр. СОБРАНІЕ РОМАНОВЪ ЗНАМЕНИТАГО ПИСАТЕЛЯ-МОРЯКА
КАПИТАНА МАРРІЭТА
Морской офицеръ.—Королевская собственность.—Приключенія Якова Вѣрнаго.—Іафетъ въ поискахъ отца.—Три яхты.—Мичманъ Изи.—Многосказочный паша.—Браконьеръ.—Корабль-призракъ.—Приключенія собаки.—Кораблекрушеніе въ Великомъ океанѣ.—Сто лѣтъ назадъ.—Приключенія въ Африкѣ.—Канадскіе поселенцы.—Приключенія Віолэ въ Калифорніи и Техасѣ.—Маленькій дикарь.—Приключенія Симпля.—Пиратъ, и друг.
12 книгъ ХУДОЖЕСТВ. ЛИТЕРАТУР. 2.600 ст. ЕЖЕМѢСЯЧНИКА
МІРЪ ПРИКЛЮЧЕНІЙ
Въ «Мірѣ Приключеній» помѣщаются новѣйшія произведенія русской и иностранной литературы: интереснѣйшіе, богато иллюстрированные романы, повѣсти и разсказы. Въ 1912 г. будутъ помѣщены, между прочимъ, слѣд. произведенія:
Въ горахъ Дауріи. Ром. изъ жизни русскихъ золотоискателей. П. Бѣлецкаго.—Шакалы пустыни. М. Первухина.—Казачьи могилы. Ѳ. Тютчева.—Отрава. М. Алазанцева.—«Бенита», ром. Райдера Хаггарда.—Аэропланъ-привидѣніе, ром. Поля д'Ивуа.—До чего они дошли. Разск. семи авторовъ.—Башня молчанія. В. Питуда.—Золотые слитки. М. Пембертона.—Корабль сокровищъ. О. Холля.—Наперегонки съ солнцемъ. Л. Мидъ.
5 книгъ РОСКОШНО ИЛЛЮСТРИР. свыше 400 иллюстр. = СОЧИНЕНІЯ =
ЗЕМЛЯ ДО ПОЯВЛЕНІЯ ЧЕЛОВѢКА
Профессора І. ВАЛЬТЕРА.
Живописная исторія нашей планеты и жизни на ней, начиная съ отдаленныхъ глубинъ сѣдой древности.
Абонементъ № 3
12 книгъ ПОЛНОЕ СОБРАНІЕ СОЧИНЕНІЙ около 2,500 стр. ГЕНІАЛЬНАГО КРИТИКА
Н. А. ДОБРОЛЮБОВА
съ портретомъ автора и біографическ. очеркомъ.
Н. А. Добролюбовъ принадлежитъ къ тѣмъ любимцамъ судьбы, произведенія которыхъ на многіе десятки и сотни лѣтъ переживаютъ своихъ творцовъ, не утрачивая современности. Являясь блестящимъ представителемъ эпохи славнаго умственнаго движенія, какое когда-либо переживало наше отечество, Н. А. Добролюбовъ пользуется широкой популярностью, особенно среди молодежи. Его сочиненія должны быть настольными книгами каждаго интеллигентнаго читателя.
6 книгъ БОГАТО ИЛЛЮСТРИРОВ. 680 стран. больш. фарм. = ИСТОРІИ =
ПЕТРА ВЕЛИКАГО
Сочиненіе всемірно-извѣстнаго профессора русской исторіи А. Г. БРИКНЕРА.
Сочиненіе профессора Брикнера представляетъ громадный вкладъ въ литературу, оцѣненный по достоинству и у насъ, и заграницей.
5 книгъ РОСКОШНО ИЛЛЮСТРИР. свыше 400 иллюстр. = СОЧИНЕНІЯ =
ЗЕМЛЯ ДО ПОЯВЛЕНІЯ ЧЕЛОВѢКА
Исторія земли и жизни.
Профессора І. Вальтера.
ПОДПИСНАЯ ЦѢНА: На 52 №№ журнала „Природа и Люди“ съ безплатн. приложеніемъ одного изъ трехъ абонементовъ (по выбору гг. подписчиковъ) 6 РУБ. ВЪ ГОДЪ безъ доставки и пересылки. 7 РУБ. ВЪ ГОДЪ съ доставкой и пересылкой.
РАЗСРОЧКА ДОПУСКАЕТСЯ: при подпискѣ 3 руб., къ 1 апрѣля 2 руб. и къ 1 іюля остальные. Или въ теченіе первыхъ 7 мѣсяцевъ, начиная съ ноября, по 1 руб.
ЖЕЛАЮЩІЕ МОГУТЪ одновременно съ подпиской на любой абонементъ, СВЕРХЪ ТОГО, получать, по своему выбору, любыя приложенія изъ другихъ абонементовъ, но за особую доплату, а именно: Соч. Марріэта въ 24 кн. за доплату 3 р. 20 коп. «Міръ Прикл.»—за 1 р. 80 к. «Земля до появл. челов.»—за 1 р. 60 к. Соч. Н. Добролюбова—за 2 р. 80 к. «Исторія Петра Вел.»—за 2 р. 40 к. 40 кн. «Соч. А. Дюма»—5 р. 20 к.
РАЗСРОЧКА ЗА ДОПЛАТНЫЯ ПРИЛОЖЕНІЯ допускается на слѣдующихъ условіяхъ: при выпискѣ на сумму до 3 руб., слѣдуетъ уплатить при подпискѣ не менѣе одного рубля. При выпискѣ на сумму болѣе 3 руб., слѣдуетъ уплатить при подпискѣ не менѣе 2 руб.
Главная Контора: С.-Петербургъ, Стремянная, 12, собств. д. Изд. П. П. Сойкинъ.
89. 3—2

Оставшійся на складѣ, въ небольшомъ количествѣ экземпляровъ,
„СПИСОКЪ ФАБРИКЪ и ЗАВОДОВЪ РОССІИ“
изд. Т|Д. Л. и Э. Метцль и К°
подъ ред. „Вѣстника Финансовъ“
Высылается за 12 рублей.
Выписывающіе изъ склада изданія: Т.|Д. Л. и Э. Метцль и К°, С.-Петербургъ, Морская 11, пользуются значительной скидкой и за пересылку не платятъ.
(չ.ու) 3—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный.